

Թոշուները, գազանները եւ ազգականներս

(հատվածներ գրքից)

հեղինակ՝ Ջերալդ Դարբել

թարգմանիչ՝ Մ. Վ. Արիստակեսյան

Բովանդակություն

[Ձիթենիների ծովախորշը](#)

[Մրտենու թավուտները](#)

[Գաճաճ ջունգլիներ](#)

[Ծովախեցգետիններն ու թանաքաձկները](#)

Ձիթենիների ծովախորշը

Եթե մեր տնից ձիթենու պուրակներով, բլրի վրայով իջնեք ցած, դուրս գաք սպիտակ ու մետաքսի նման փափուկ հաստ շերտով ծածկված ճանապարհը ու մի քիչ էլ առաջ գնաք, կհայտնվեք նեղ գառիթափ արահետի վրա, որը ձիթենու մացառուտների միջով գնում է դեպի կիսալուսնաձև փոքրիկ ծովախորշիկը: Ծովախորշն այդ երիզված է սպիտակ ավազի լողափով և չոր ջրիմուռների կույտերով, որոնք այստեղ են ընկել ձմեռային պեղծությունից, ու այժմ նման են թոշունի գզգզված բնի: Ծովախորշի երկու կողմից բարձրանում են փոքրիկ ժայռեր, և այնտեղ, ժայռերի միջև, վիստում են ամեն տեսակ ծովային արարածներ:

Հենց որ իմ ուսուցիչ Ջորջը հասկացավ, որ ինքը չի կարող գրավել ուշադրությունս, եթե ամեն առավոտ ինձ պահի չորս պատի մեջ, նա մի նոր քայլ արեց մանկավարժության մեջ և հիմք դրեց «բաց երկնքի տակ դասերին»: Ավագուտ լողափը և ջրիմուռների գզգզված կույտերը անմիջապես վերածվեցին տապ անապատի կան անանցանելի ջունգլիների, ուր մենք անց էինք կացնում մեր հետազոտությունները, իսկ անձոռնի խեցգետիններն ու փոքրիկ ժրաջան կողագնացները մեզ մոտ կատարում էին Կորտեսի կամ էլ Մարկո Պոլոյի դերը: Այժմ աշխարհագրության դասերն ինձ համար արտակարգ գրավիչ էին: Մի քիչ ավելի ուշ մենք մտածեցինք կազմել աշխարհի քարտեզը քարտեզով, դրանք դասավորելով անմիջապես ավի երկայնքով, այնպես որ մեր քարտեզը այժմ իսկական ծով ուներ: Այս աշխատանքը

շատ երկար տևեց: Նախ՝ հեշտ բան չէր այնպիսի քար գտնել, որ նման լիներ Աֆրիկային, Հնդկաստանին կամ Հարավային Ամերիկային: Երբեմն, ցանկալի մայրցամաքը ստանալու համար, հարկավոր էր լինում միաժամանակ դնել երկու կամ երեք քար: Երկրորդ՝ գտնելով անհրաժեշտ քարը, մենք նրա տակ հայտնաբերում էինք ամեն տեսակ ծովային կենդանիներ և դրանցով զբաղվում էինք քառորդ ժամից ավելի, մինչև որ Ջորջը հանկարծ գլխի էր ընկնում, որ եթե այսպես շարունակենք, մեր աշխարհի քարտեզով հեռու չենք գնա:

Այս ծովախորշիկը դարձավ իմ սիրած վայրերից մեկը, ուր մենք Ռոջերի հետ գնում էինք ամեն օր, ետևսօրյա շոգ ժամերին, երբ տանը բոլորը հանգստանում էին: Մենք անցնում էինք ձիթենու անշարժացած պուրակներով, ուր տարածված էր ծղրիղների ճռռոցը, ու դանդաղ իջնում ճանապարհով: Ռոջերն իր վիթխարի թաթերով սպիտակ փոշի էր բարձրացնում ու ամբողջ ժամանակ հաճույքով փռշտում էր, ինչպես բուռնօթից: Հասնելով ծովախորշին, որն այդ ժամանակ այնքան խաղաղ էր ու վճիտ, ասես նրա մեջ իսկի ջուր էլ չկար, մենք լողանում էինք ծանծաղ տեղում, ու հետո ամեն մեկս գնում մեր գործին:

Ռոջերի համար — դա ծանծաղ ջրում վխտացող ձկներ բռնելու հուսահատ ու անհաջող փորձեր էին: Աչքերը ջրին հառած ու ականջները սրած՝ նա դանդաղ հետևում էր ձկներին ու կամաց ինչոր քրթմնջում իր համար: Հետո հանկարծ նրա գլուխն անհետանում էր ջրի տակ, լսվում էր սեղմված ծնոտների կրճտոց, ու շուտով նա նորից գլուխը հանում էր ջրից, բարձր փռշտում ու թափահարում մարմինը, իսկ ձկնիկը, որի հետևից նա ընկել էր, այդ ընթացքում հասցնում էր երկու յարդ առաջ անցնել և, քարի մոտ տեղավորվելով, նրա կողմն էր շրջում իր ուռած դնչիկը ու կոկետորեն թափահարում պոչը:

Այս փոքրիկ ծովախորշում այնքան շատ զանազան կենդանիներ կային, որ ես ուղղակի չգիտեի ինչից սկսեմ իմ հավաքածուն: Ամենուրեք քարերի վրա երևում էին օղակավոր որդերի կրասպիտակ հետքեր, ասես կարկանդակի վրա շաքարաշերտի մի բարդ ոլորապտույտ նախշ էր արված, իսկ տեղտեղ, մի քիչ ավելի խորքում, ավազի միջից կարծես դուրս էին ցցվել բարավիկ փողրանքի կտորտանքները: Եթե կանգնեիր և ուշադիր դիտեիր, ապա կտեսնեիր, թե ինչպես փողրակի ծայրերին հայտնվում է նուրբ, փափուկ կապտաերփներանգ, կարմիր ու գորշ շոշափուկների փունջը: Դրանք նստակյաց բազմաբնակչություն ունեցող որդեր էին: Իմ կարծիքով, սա շատ անբարեհնչյուն անուն է նման գեղեցիկ արարածների համար: Երբեմն դրանք հանդիպում էին ոչ մեծ կույտերով, նմանվելով ծաղկաթմբի, որի բոլոր ծաղիկները շարունակ շարժվում էին: Նրանց պետք է մոտենալ շատ զգույշ, որովհետև ձեր ոտքերի շարժումից ջուրը կալիքվի ու նրանց կտեղեկացնի վտանգի մասին: Շոշափուկներն այն ժամանակ կմիահյուսվեն և չտեսնված արագությամբ կանհետանան խողովակի մեջ:

Ծովախորշիկի ավազե հատակին այս ու այնտեղ սևին էին տալիս լամինարի փայլուն ջրիմուռների մահիկները, ասես ինչոր մեկը ավազի վրա շաղ էր տվել սև փետուրներ: Եվ դրանց մեջ կարելի էր տեսնել ասեղնաձուկ: Նրա գլխիկը զարմանալիորեն հիշեցնում է ձգված ծովաձիու, որ նստած է երկար ու ճկուն մարմնի վրա: Ասեղնաձկները լամինարիների մեջ մնում են ուղղահայաց դիրքով և գրեթե ձուլվում են դրանց հետ, և նրանք անմիջապես չեն նկատվում:

Ժայռերի ստորոտում, ափին մոտիկ, կարելի է հանդիպել փոքրիկ խեցգետինների կամ էլ ծիրանագույն ակտինիաների, դրանք ասես գնդասեղների փոքրիկ բարձիկներ լինեն՝ զարդարված ալ կարմիր ու երկնագույն հուլունքներով: Հանդիպում են այստեղ և այլ ակտինիաներ, սրճագույն նուրբ ոտքով ու գալարուն երկար շոշափուկներով, որոնց կնախաձեր նույնիսկ ինքը ԳորգոնաՄեդուզան: Բոլոր քարերը ծածկված էին վարդագույն, սպիտակ կամ կանաչ մարջաններով և ծովային մանրագույն, նուրբ ջրիմուռներով, նրանց մեջ նուրբ *Acctabularia mediterranea*-ն իր բարակ, թելանման ցողուններով: Յուրաքանչյուր ցողունի վերջում փայլում էր մի փոքրիկ կանաչ հովանոց, որն ասես շրջված էր ինչոր ստորջրյա քամուց: Երբեմն ժայռի վրա երևում էր մի մեծ սև սպունգ՝ լայն բացված բերաններով, որ նման էին հրաբխի կոներին: Այդպիսի սպունգը վատ չէր լինի պոկել ժայռից և մեջտեղից երկու մասի բաժանել. նրա մեջ երբեմն կարելի էր գտնել մի որևէ հետաքրքիր կենդանի: Ճիշտ է, սպունգի միջից ձեր ձեռքին կթափվի գարշելի լորձունք, սխտորի կծու հոտով, որը երկար ժամանակ չի անցնի:

Ափին և ժայռերի արանքում ես նորանոր խեցիներ էի հավաքում, և ինձ հաճույք էր պատճառում ոչ միայն խեցիների գեղեցիկ ձևը, այլև նրանց արտասովոր արտահայտիչ անունները: Ես իմացա, օրինակ, որ սրածայր խեցին, որի մի մասը ձգված է կիսաթաղանթավոր մասների նման, կոչվում է «հավալուսնի ոտք», իսկ սպիտակ, կլոր խեցին, որը նմանվում է խխունջ ափսեիկի, կրում էր «չիանական գլխարկ» անունը:

Այնտեղ կային նաև «տապան» կոչվող խեցիներ: Զարմանալի, գրեթե գրեթե պնդուկի նմանվող այս խեցու բացված փեղկերը կարելի է համեմատել (եթե ունեք թեկուզ մի կաթիլ երևակայություն) երկու փոքրիկ տապանիկների հետ: Ոլորապտույտ «աշտարակ» խեցին սրածայր է, ինչպես միաեղջյուրի ժանիք, իսկ «հոլ» խեցին նախշված է կարմիր, սև ու կապույտ գույնի վառ զիզգագներով: Մեծ ժայռերի ստորոտում հանդիպում էին նաև «բանալու անցք» կոչվող ափսեիկներ: Այս խեցու զագաթում իսկապես անցք կա, որի միջով շնչում է նրա տերը: Բայց առանձնապես ուրախալի էր «ծովականջ» կոչվող խեցի գտնելը. դա շատ գորշ թերթավոր խեցի է և մի կողմի վրա անցքերի շարք ունի: Եթե այս խեցին շրջենք ու նրա միջից հանենք օրինական տիրոջը, մեր առջև կբացվի նրա ամբողջ ներքին պարունակությունը, որ փայլում է օպալի ու ծիածանի անհավատալի գեղեցկությամբ: Այն ժամանակ ես ակվարիում չունեի, ուստի և ծովախորշի մի անկյունում քարերով

փակել էի ջուրը, մոտ ութ ոտնաչափ երկարությամբ և չորս ոտնաչափ լայնությամբ, ուր կարող էի պահել իմ ամբողջ բազմատեսակ որսը, գրեթե չկասկածելով, որ նրանց այնտեղ կգտնեմ և հաջորդ օրը:

Հենց այս ծովախորշում ինձ հաջողվեց բռնել իմ առաջին սարդիկեցգետինը: Ես երևի կանցնեի նրա կողքով, ենթադրելով, թե դա ջրիմուռներով ծածկված քար է, եթե խեցգետինն անզգույշ շարժում չաներ: Ե՛վ իր մեծությամբ և՛ ձևով նրա մարմինը նմանվում էր ոչ մեծ, հարթ տանձի և վերին նեղացող մասում փշոտ էր, աչքերի վերևի երկու ելուստները ասես եղջուրներ լինեին: Նրա ոտքերն ու չանչերը շատ բարակ ու երկար էին, բայց ամենից շատ ինձ զարմացնում էր այն, որ ամբողջ մեջքը ծածկված էր մանր ջրիմուռներով, ճիշտ այնպես, ասես նրանք բուսել էին նրա պատյանից. ինձ գերեց այս արտասովոր արարածը, ու ես նրան վեր բարձրացրի և հանդիսավոր տարա իմ լճախորշը: Պետք է շատ ամուր բռնեի նրան, քանի որ արդեն հասկացավ, որ հանձին իրեն ճանաչել են խեցգետնին, և հուսահատ փորձում էր փախչել, ուստի երբ մենք հասանք լճախորշին, բոլոր ջրիմուռները նրա վրայից գրեթե պոկվել էին:

Ես խեցգետնին դրի ծանծաղ ջրի մեջ և, պառկելով բերանքսիվար, սկսեցի դիտել, թե ինչ է նա անելու: Խեցգետինը կանգնեց իր երկար ոտքերի վրա և, նմանվելով գոհի հետապնդող սարդի, մոտ մի ոտնաչափ հեռացավ այն տեղից, ուր ես իրեն դրել էի, ապա քարացավ մեռածի պես: Այսպես նա նստեց բավական երկար, ու ես նույնիսկ արդեն կարծեցի, որ նա օրվա ամբողջ առաջին կեսը պիտի նստի անշարժ ու ուշքի գա ապրած ցնցումից, բայց խեցգետինը հանկարծ ուղղեց բարակ, երկար չանչերը և շատ նրբանկատորեն, գրեթե ամոթխածորեն մոտակա քարից պոկեց մի կտոր ջրիմուռ, մոտեցրեց բերանին և սկսեց ծամել: Ես կարծում էի, թե նա այն կուտի, բայց ամեննին էլ այդպես չարեց: Անճոռնի նազանքով խեցգետինը չանչը տարավ դեպի մեջքը, զգույշ շոշափեց տեղը և ամրացրեց այնտեղ մի կտոր ջրիմուռ:

Հավանաբար, նա ջրիմուռի հիմքը թրջեց թթով կամ ինչոր համանման բանով, որ կարողանա այն կպցնել վահանիկին: Ես շարունակում էի հետևել նրան, իսկ նա դանդաղ պտտվում էր ամբողջ լճախորշով մեկ և, գիտնականբուսաբանի ինքնագոհ ջանասիրությամբ, հավաքում զանազան ջրիմուռներ: Արդեն մոտավորապես մեկ ժամ հետո նրա մեջքը պատած էր բուսականության այնպիսի խիտ շերտով, որ եթե ես մի րոպե աչքս թարթեի, իսկ խեցգետինը քարանար տեղում, ապա անմիջապես չէի կարողանա որոշել, թե որտեղ է գտնվում նա:

Ինձ անչափ հետաքրքրեց այսպիսի հնարամիտ քողարկումը, ու մանրագնին խուզարկեցի ամբողջ ծովախորշը և գտա էլի մի խեցգետին սարդ, նրա համար սարքեցի հատուկ փոքրիկ ավազան, ավազոտ հատակով, ուր ջրիմուռների հետք էլ չկար: Երբ ես խեցգետնին տեղավորեցի այստեղ, նա բավական գոհ տեսք ուներ: Հաջորդ օրը ես տնից բերեցի եղունգների խոզանակը (նրա տերը Լարրին էր), և, բռնելով դժբախտ խեցգետնին սկսեցի դաժանորեն քերել նրան, մինչև որ ո՛չ մեջքին, և

ո՛չ էլ ոտքերին չմնաց ջրիմուռի հետք անգամ: Հետո նրա լճակի մեջ գցեցի ինչ պատահի (հոլխիտունջիկներ, մարջանի կտորտանք, փոքրիկ ակտինիաներ, ապակե շշի մանր կտորտանքներ, որ ջրի մեջ վերածվեցին չտեսնված թանկարժեք քարերի) և, նստելով, սկսեցի դիտել:

Մի քանի րոպե խեցգետինը նստել էր քարացած, երևում է, ուշքի էր գալիս այն ստորացուցիչ մաքրումից հետո, որին նրան ենթարկեցի: Հետո, ասես թե ի վիճակի չլինելով հավատալու իրեն վիճակված չար բախտին, նա երկու չանչերը գլխից վեր բարձրացրեց և շատ զգույշ շոշափեց մեջքը: Հավանաբար, հակառակ եղելությանը, հույս ուներ այնտեղ գտնելու ջրիմուռի թեկուզ փոքրիկ մի շյուղ: Սակայն ես իմ գործը լավ էի տեսել, խեցգետնի մեջքը ամբողջովին հարթ էր ու փայլուն: Նա մի քանի անվստահ քայլ կատարեց, կանգ առավ և կես ժամ նստեց տխուր հուսահատության մեջ, բայց հետո, այնուամենայնիվ, հաղթահարեց ընկճվածությունը և մոտեցավ ավազանի ափին, փորձելով խրվել գորշ քարերի տակ: Նա այնտեղ էլ նստեց, դառնորեն ողբալով իր անհետացած քողարկման մասին, իսկ ես պիտի արդեն տուն գնայի:

Հաջորդ առավոտյան ես շատ շուտ եկա ծովախորշ և ուրախությամբ տեսա, որ իմ բացակայության ընթացքում խեցգետինը ժամանակն իզուր չի կորցրել: Ջանալով չմատնվել հուսահատության, նա իր պատյանը զարդարել էր այն ամենով, ինչ ես թողել էի նրա համար: Նրա տեսքը շատ զվարճալի էր, ասես հագնվել էր դիմակահանդեսի համար: Մեջքի վրա մարջանի բեկորների արանքում ցցվել էին հոլխիտունջներ, իսկ գլխի մոտ ամբարցրել էր ակտինիային, ասես դրել էր մի շքեղ, ժապավենով գլխարկ: Ես դիտում էի, թե ինչպես է խեցգետինը սողում ավազոտ հունով, և մտածում էի, որ նա հիմա չափից ավելի է աչքի զարնում, բայց ահա նա սողաց իր սիրած տեղը, քարի տակ և, ի զարմանս իմ, վերածվեց ուղղակի խխունջների և մարջանի կտորների կույտի՝ գագաթին զույգ ակտինիաներով:

Իմ ծովախորշից ձախ, ափից մոտավորապես չորս մղոն հեռավորության վրա, ընկած էր Պոնդիկոնիսի կամ Մկան կղզին, որը ձևով գրեթե հավասարակողմ եռանկյունի է, կղզին ամբողջովին ծածկված է դափնեվարդերով ու սլացիկ նոճիներով, որոնց տակ ապաստանել է մի փոքրիկ սպիտակ եկեղեցի և նրա կողքին՝ փոքրիկ տնակ: Կղզում ապրում էր մի շատ չար ծեր վանական, որը հագնում էր երկար սև զգեստ և գլանաձև գլխարկ: Ցերեկը, հավանաբար, նա պետք է խփեր իր փոքրիկ եկեղեցու զանգերը, իսկ երեկոյան, առանց շտապելու, նավակով ուղևորվում էր ոչ հեռվում երևացող հրվանդանը, ուր կար մի փոքրիկ կուսանոց, և այնտեղ ապրում էին երեք ծեր միանձնուհիներ: Այնտեղ նա ստանում էր կերակուր և մի գավաթ սուրճ, զրուգում էր (հավանաբար, ժամանակակից աշխարհի մեղքերի մասին), իսկ երբ մայր մտնող արևը նրա կղզին շրջապատող լռին ջրերը վեր էր ածում գույնզգույն մետաքսե շղարշի, նա կորացած, ինչպես սև ազոավ, իր ճոճոացող ու ջուր թողնող նավակով դանդաղ վերադառնում էր ետ:

Հենց այդ ժամանակ էլ Մարգոն, հիասթափված օդային վաննաներից, որոշեց փորձել Մայր Բնության մեկ այլ բուժական միջոցը՝ ծովային լոգանքները: Ամեն առավոտ նա վեր էր կենում մոտավորապես վեցի կեսին, հանում էր ինձ անկողնուց, և մենք երկուսով գնում էինք ծով, սուզվում վճիտ ջրի մեջ, որ դեռևս սառն էր լուսնի փայլից, և հետո դանդաղ լողում դեպի Պոնդիկոնիսի:

Մարգոն անմիջապես փովում էր արևի տակ, իսկ ես խառնշտորում էի ծանծաղ ջուրը: Դժբախտաբար, մեր այցելություններն այնքան էլ դուր չէին գալիս վանականին: Չէր հասցնում Մարգոն պատկել ժայռի վրա ու հարմար դիրք ընդունել, երբ վանականն սկսում էր դոփել դեպի եկեղեցի տանող քարե երկար սանդուղքի աստիճանների վրա, սպառնում նրան բռունցքով և իր մեծ զգգված մորուքի խորքից թափում հունարեն խոսքերի անհասկանալի շարաններ: Մարգոն վանականին դիմավորում էր պայծառ ժպիտով և բարեկամաբար ձեռքով անում ու էլ ավելի էր կատաղեցնում նրան: Օդը հատելով իր սև հագուստով, վանականն այս ու այն կողմ էր նետվում և դողդողացող ու թքոտած մատով մատնացույց էր անում երկինքն ու հետո Մարգոյին: Սա կրկնվում էր ամեն օր, և քանի որ վանականի բառապաշարն այնքան էլ հարուստ չէր, վերջ ի վերջո ինձ հաջողվեց հիշել նրա մի քանի սիրած արտահայտությունները: Երբ հետագայում ընկերոջս՝ Ֆիլեմոնին, հարցրի, թե ինչ են դրանք նշանակում, նա ծիծաղից թուլացավ: Քրքջալուց նա ուղղակի խոսել չէր կարողանում, բայց այնուամենայնիվ ես վերջապես հասկացա, որ վանականը Մարգոյի գլխին հայհոյանքներ էր թափել, ու դրանցից ամենամեղմը եղել է «սպիտակ վիուկը»:

Սակայն ժամանակի ընթացքում այդ բոլորը վերածվեց խաղի: Այժմ, ճանապարհվելով կղզի, մենք վանականի համար մի քանի սիգարետ էինք վերցնում, իսկ նա տեսնելով մեզ, քարե աստիճաններով թռչում էր ցած, բռունցքը թափահարում ու սպառնում աստծո պատիժով: Այսպիսով կատարելով իր պարտքը, վանականն ուղղում էր փարաջան, և նստում էր քարե պարսպի վրա և բարեհոգաբար ծխում մեր սիգարետները: Երբեմն նա նույնիսկ վերադառնում էր եկեղեցի, որ մեզ համար մի բուռ թուզ բերի իր ծառից կամ թարմ ու հյութոտ նուշ, որը կոտրում էինք հենց ծովափին՝ երկու լերկ քարով:

Պոնդիկոնիսիի և իմ սիրած ծովախորշի միջև շարքով ձգվում էին խութեր, մի քանիսը սեղանի չափ էին, իսկ մյուսները՝ փոքրիկ պարտեզից մեծ չէին: Գրեթե բոլորն էլ ունեին հարթ գագաթ և ծովի մակերևույթից ցածր էին միայն երկու դյույմով, այնպես որ եթե բարձրանայինք դրանց վրա և կանգնեինք, հեռվից կարող էր թվալ, թե մենք քայլում ենք ջրի վրայով: Ես վաղուց էի ցանկանում ուսումնասիրել խութերը, որովհետև այնտեղ ապրում էին ծովային այնպիսի կենդանիներ, որոնք չեն հանդիպում ծովախորշի ծանծաղ մասերում: Սակայն այստեղ ես հանդիպեցի անհաղթահարելի դժվարությունների, որովհետև չէի կարողանում հետս վերցնել անհրաժեշտ իրերը: Մի անգամ ես փորձեցի լողալով գալ խութի մոտ՝ վզիցս երկու

ապակե բանկա կախած ու ցանցը ձեռքիս, բայց կես ճանապարհին երկու բանկաներն էլ միանգամից ջրով լցվեցին ու ինձ քաշեցին ցած: Անցավ մի քանի րոպե, մինչև ես կարողացա դրանցից ազատվել ու ջրի երես դուրս գալ: Մինչ ես շունչ քաշեցի ու թքեցի կուլ տված ջուրը, բանկաներս արդեն գտնվում էին խոր ջրի տակ, օրորվում էին, փայլվում ու այնքան անմատչելի էին, որքան՝ եթե լինեին Լուսնի վրա:

Մի շոգ օր ես իմ ծովախորշում քարերի տակ որոնում էի բազմագույն նեմերիտների ու այնպես էի տարվել, որ չնկատեցի, թե ինչպես մոտեցավ մի նավակ: Միայն երբ նավակի քթի տակ ավազը խշշաց, ես ետ նայեցի: Նավախելի թիակին հենված (բոլոր ձնկնորսներն այստեղ թիավարում էին մի թիակով, ձկան պոչի նման թափահարելով այն ջրի մեջ) կանգնած էր արևից սևացած մի երիտասարդ: Նա ուներ գանգուր, թուխ մազեր, փայլուն, թթի պես սև աչքեր և կուրացուցիչ սպիտակ ատամներ, որ փայլում էին արևավառ դեմքի վրա:

— Յասո՛ւ, — ասաց նա, — ողջ լինես:

Ես պատասխանեցի նրա ողջունին, նայելով, թե ինչպես տղան ճարպկորեն դուրս թռավ նավակից ու ձեռքի մեծ ժանգոտ խարիսխն ամրացրեց ափին, չորացած ջրիմուռների կույտի ետևում: Հետո նա եկավ և բարեկամաբար նստեց կողքիս, գրպանից հանելով թիթեղյա ծխախոտատուփը: Նա հագել էր պատռված ֆուֆայկա ու վարտիք, որ մի ժամանակ կապույտ գույն էր ունեցել, բայց այժմ արևից սպիտակել էր:

— Այսօր շոգ է, — կնճռտվելով ասաց տղան, իսկ նրա հաստ, կոպտացած մատները զարմանալի արագությամբ փաթաթում էին գլանակը:

Նա ծխախոտը վառեց մետաղե մեծ կրակվառիչով ու նայեց ինձ՝ մորեհավի աչքերի նման վճիտ աչքերով:

— Դու այն օտարերկրացիներից չե՞ս, որ ապրում են բլրի վրա, — հետաքրքրվեց նա:

Այդ ժամանակ ես արդեն բավական տանելի խոսում էի հունարեն և նրան պատասխանեցի, որ այո՛, ես հենց այդ օտարերկրացիներից եմ:

— Իսկ մյուսնե՞րը, — հարցրեց նա, — տանը եղած մյուսները, նրանք ո՞վ են:

Ես արդեն վաղուց գիտեի, որ Կորֆուի բոլոր բնակիչները, հատկապես գյուղացիները, սիրում են հետաքրքրվել ամեն ինչով, իսկ իրենք էլ պատմում են քեզ իրենց անձնական կյանքի բոլոր մանրամասնությունները: Ես նրան բացատրեցի, որ մյուսները՝ մայրս, երկու եղբայրներս և քույրս են: Նա լուրջ տեսքով գլխով արեց, ասես դրանք բացառիկ կարևոր տեղեկություններ էին:

— Իսկ հա՞յրդ, — շարունակեց նա հարցուփորձը: — Որտե՞ղ է քո հայրը:

— Ես բացատրեցի, որ հայրս մահացել է:

— Խեղճ, — բացականչեց նա անկեղծ կարեկցանքով: — Եվ քո դժբախտ մայրիկը մնացել է չորս երեխաները ձեռքին:

Նա վշտագին հառաչեց այդ ծանր մտքերից, բայց հետո հանգստացավ և փիլիսոփայորեն նկատեց.

— Այդպիսին է կյանքը: Դու ի՞նչ ես փնտրում քարերի տակ:

Ես փորձեցի դա բացատրել նրան ավելի լավ ձևով, թեև միշտ էլ դժվար էր բացատրել, թե ինչու են ինձ հետաքրքրում տեսքով զգվելի և ամեննին էլ ոչ ուտելի այդ կենդանիները:

— Քո անունն ի՞նչ է, — հարցրեց նա:

Ես բացատրեցի, որ իմ Ջերալդ անունը հունարեն լեզվով ավելի շատ համապատասխանում է Գերասիմոսին, բայց ընկերներս ինձ ուղղակի կոչում են Ջերրի:

— Իսկ իմ անունը Տակի է, — ասաց նա, — Տակի Տանատոս: Ես ապրում եմ Բենիցեսում:

Ես հարցրի, թե ինչ է նա անում այստեղ, իր գյուղից այդքան հեռու:

— Բենիցեսից դուրս գալուց հետո շարունակ ձուկ եմ բռնել: Հիմա կուտեմ ու կքնեմ, իսկ գիշերվա դեմ կրակ կվառեմ և կլողամ ետ: Նորից ձուկ կբռնեմ:

Այս լուրը ինձ խիստ հուզեց: Բոլորովին վերջերս մենք ուշ գիշերով վերադառնում էինք քաղաքից, և ճանապարհին կանգ առնելով մեր բլրի մոտ, տեսանք ներքևում սահող մի նավակ՝ աղեղնաձև մեծ լամպը նավաքթին: Ձկնորսը դանդաղ վարում էր նավակը ծանծաղ ու մութ ջրերով, և նրա լապտերի լույսի օղակը պայծառ լուսավորում էր ծովի հատակը, իսկ երբ նավակն անցնում էր խութերի մոտով, նրանք բոլորը բռնկվում էին դեղին, կարմիր, վարդագույն ու դեղնականաչավուն երանգներով: Ես իսկույն հասկացա, թե դա ինչ հրաշալի գործ է, միայն թե դեռևս չունեի ծանոթ ձկնորսներ: Այժմ հիացմունքով նայեցի Տակիին և իսկույն հարցրի, թե ո՞ր ժամին է սկսելու ձկան որսը և մտադի ր է արդյոք շրջանցել այս ծովախորշիկի և Պոնդիկոնիսի կղզու միջև գտնվող խութերը:

— Ես մեկնելու եմ ժամը տասին, — պատասխանեց նա, — կշրջանցեմ կղզին ու հետո կլողամ դեպի տուն:

Ես հարցրի, թե ինձ էլ կվերցնի՞ իր հետ և բացատրեցի, որ խութերում ապրում են բազմաթիվ հետաքրքիր կենդանիներ, որոնց ես բռնել չեմ կարող առանց նավակի:

— Ինչու չեմ վերցնի, — պատասխանեց նա: — Ես քեզ կսպասեմ Մենեալոսի դիմաց: Արի այնտեղ ժամը տասին: Կշրջանցենք խութերը, և ես նորից քեզ ավի կհանեմ Մենեալոսի մոտ, իսկ հետո արդեն կլողամ դեպի տուն:

Ես հավատացրի նրան, որ տասին կլինեմ ավիին, հետո սուլեցի Ռոջերին, վերցրի ցանցն ու շշերը և շտապեցի հեռանալ, քանի դեռ Տակին միտքը չի փոխել: Բավական հեռանալով նրանից, քայլերս դանդաղեցրի ու սկսեցի լարված մտածել, թե ինչպես համոզեմ տնեցիներին, հասկապես մորս, որ ինձ ժամը տասին թույլ տա ծով գնալ:

Ինչպես հայտնի է, մորս միշտ անհանգստացնում էր, որ օրվա շոգ ժամերին ես չեի ուզում քնել: Ես նրան բացատրում էի, որ միջատների ու նման արարածների համար դա օրվա ամենալավ ժամն է, միայն թե մայրս դա չէր համարում ծանրակշիռ պատճառաբանություն: Իսկ երեկոները, հենց այն պահին, երբ տեղի էր ունենում մի հետաքրքիր բան (օրինակ՝ Լարրին ու Լեսլին լեզվակոծիվ էին անում), մայրիկս զայրացած փնթփնթում էր.

— Անկողին մտնելու ժամանակն է, սիրելիս: Մի մոռացիր, որ ցերեկը դու բոլորովին չես քնել:

Ես հասկանում էի, որ հենց այս հանգամանքը կարող է խոչընդոտ հանդիսանալ իմ գիշերային ձկնորսության համար: Հիմա դեռ միայն ժամը երեքն է, և, իհարկե, այդ ժամին բոլորը տանը խոր քնած են փակ կրկնափեղկերի ետևում: Միայն վեցի կեսին կսկսեն արթնանալ և բզբզալ ճանճերի պես:

Ես շնչակտուր սլացա տուն, հետո մի պահ կանգ առա, հանեցի շապիկս և դրանով ինամքով փաթաթեցի բանկաները, որ ինձ չմատնեմ ոչ թիկոցով, ոչ գնոցով, իսկ Ռոջերին պատվիրեցի ծպտուն չհանել: Մենք գաղտագողի մտանք տուն և, ստվերների նման, սահեցինք իմ ննջարանը: Ռոջերը, շունչը պահած՝ նստեց սենյակի մեջտեղում և նկատելի զարմանքով սկսեց նայել, թե ինչպես եմ հանվում ու անկողին մտնում: Նա բոլորովին համոզված չէր, որ այսպիսի վարքագիծը կարելի է քաջալերել: Չէ՞ որ ամբողջ կեսօրը դեռ առջևում էր, և հրաշալի արկածները սպասում էին մեզ, իսկ ես հանկարծ պատրաստվում եմ քնելու: Շունը փորձեց վնգվնգալ, բայց ես այնպես կատաղի փնչացրի նրա վրա, որ նա, պոչը ծալելով, մտավ մահճակալի տակ ու պառկեց այնտեղ, տխուր հառաչելով: Ես վերցրի գիրքը և փորձեցի կարդալ. փակ կրկնափեղկերով սենյակը վերածվեց սառը, կանաչ ակվարիումի, իրականում օդը տաք էր ու հեղձուցիչ, ու ինձնից շիթերով քրտինք էր հոսում: Ես շուռումուռ էի գալիս արդեն թրջված սավանի վրա և զարմանում, թե ինչ լավ բան են գտնում մարդիկ այս կեսօրյա քնի մեջ: Ինչ օգուտ կա դրանից: Ինձ համար պարզ չէր, թե ինչպես կարող են

նրանք առհասարակ քնել: Եվ հենց այդ պահին էլ մի ակնթարթում ընկղմվեցի քնի մեջ:

Արթնացա վեցի կեսին և քնաթաթախ դուրս եկա պատշգամբ, ուր բոլորն արդեն թեյ էին խմում:

— Աստված ծիւմ, — բացականչեց մայրս: — Մի՞ թե դու քնել ես:

Ես ասացի, իբր ի միջի այլոց, որ ինձ համար այսօր օգտակար էր հանգստանալը:

— Հո վատ չես զգում, սիրելիս, — անհանգստացավ մայրս:

Ես պատասխանեցի, որ միանգամայն առողջ եմ, իսկ հանգստանալ որոշեցի, որ երեկոյի համար ուժեր հավաքեմ:

— Իսկ ինչ է պատահել, սիրելիս, — հարցրեց մայրս: Աշխատելով հանգիստ ու անփույթ ձևանալ, ես ասացի, որ ժամը տասին մեկնում եմ ծով, մի ձկնորսի հետ, որն ինձ վերցնում է գիշերային որսի: Հետո բացատրեցի, որ որոշ կենդանիներ դուրս են գալիս միայն գիշերը, և դա ամենալավ ժամանակն է նրանց որսալու համար:

— Հուսով եմ, — սպառնազին արտասանեց Լարրին, — դա չի նշանակում, որ մեր տան հատակի վրա կսկսեն շրմփալ ութոտնուկները և օձաձկները: Ավելի լավ է, դու նրան մի թող, մամա, թե չէ չես հասցնի ուշքի գալ, երբ ամբողջ տունը և՛ իր տեսքով և՛ իր հոտով կնմանվի ձկան շուկայի:

Ես տաքացած պատասխանեցի, որ ամեննին էլ մտադիր չեմ կենդանիներին քարշ տալ տուն, այլ նրանց կտանեմ ծովախորշի իմ հատուկ ավազանը:

— Ժամը տասը շատ ուշ է, սիրելիս, — ասաց մայրս: — Իսկ դու ե՞րբ կվերադառնաս:

Ես համարձակորեն ստեցի, որ կվերադառնամ տասնմեկին մոտ:

— Լավ, միայն թե տաք հագնվիր, — ասաց մայրս: Նա միշտ կարծում էր, որ եթե իմ հագին բրոյա ֆուֆայկա չլինի, ապա, չնայած խաղաղ ու տաք գիշերվան, ես անպայման երկկողմյա թոքերի բորբոքում կստանամ:

Ազնվորեն խոստանալով տաք հագնվել, ես թեյ խմեցի և հետո մոտ մեկ ժամ սկսեցի ստուգել ու զննել որսի հանդերձանքս: Հետո վերցրի երկար բռնակով որսացանքը, ծայրին երեք լարակեռերով բամբուկե մեծ փայլտ, որ զննելու համար դեպի ինձ քաշեմ ծովային ջրիմուռների կույտերը, ապակե լայնաբերան ութ բանկա ու մի քանի թիթեղյա տուփ, արկղիկներ խեցգետինների ու խխունջների համար:

Համոզվելով, որ մայրս մոտերքում չէ, ես շորտի տակ հագա լողավարտիքը, իսկ հավաքածուների պարկի տակ թաքցրի սրբիչը: Չէ՞ որ մի քանի նմուշների համար ստիպված կլինեի սուզվել ջրի տակ: Իսկ եթե մայրս իմանար, որ ես մտադիր եմ թռչել ջրի մեջ, թոքերի երկկողմանի բորբոքման նկատմամբ նրա սարսափը կհարյուրապատկվեր:

Տասից քառորդ պակաս պայուսակը գցեցի մեջքիս, վերցրի լապտերիկը ու ձիթենիների պուրակի միջով իջա ծովափ: Աստղագարդ երկնքում երևում էր գունատ լուսնի մահիկը, որ գրեթե լույս չէր արձակում: Ձիթենիների մեջ առկայծում էին լուսատիտիկների գմբուխտե կրակները և լսվում էր, թե ինչպես են իրար կանչում բվեճները՝ տո՛ի՛ նկ, տո՛ի՛ նկ:

Երբ ես մոտեցա ափին, Տակին նստել էր նավակի մեջ ու ծխում էր: Նա արդեն վառել էր նավախելի լամպը: Լամպը ջրի մեջ գցել էր վառ լույսի մի օղակ և գայրացած ֆշշում էր, տարածելով սխտորի կծու հոտը: Ես անմիջապես նկատեցի, թե որքան արարածներ էր գրավել նրա լույսը: Իրենց բներից դուրս էին լողացել փոքրիկ ձկնիկները և ծովաշնիկները, տեղավորվել ջրիմուռներով ծածկված քարերի վրա, ու, կուլ տալով ջուրը, նստել էին իրենց փքված դնչիկներով, իսկ և իսկ թատրոնի հանդիսականների նման, սպասելով վարագույրի բարձրանալուն: Չորս կողմը վիստում էին ափեզրյա խեցգետինները, ամեն քայլափոխի նրանք կանգ էին առնում և, քաղաքավարի պոկելով մի կտոր ջրիմուռ, տանում էին բերանները: Շարունակ հայտնվում էին խխունջ հոլերը, որոնք իրենց մեջքին քարշ էին տալիս փոքրիկ, գայրացկոտ տեսքով մենակյացխեցգետինները, փոխարինելով օրինական տերերին:

Ես իմ հանդերձանքը դրեցի նավակի հատակին և, բավականությամբ շունչ քաշելով, ինքս էլ բարձրացա նավակը: Տակին, ափից ետ հրվելով, վերցրեց թիերից մեկը և ձողի պես պտտելով այն, նավակը տարավ ծանծաղ ջրում կուտակված գորշ ջրիմուռների միջով, որոնք մեղմ խշշում էին, դիպչելով նավակի կողերին: Խոր տեղում նա կարգի գցեց երկու թիերը և սկսեց թիավարել: Մենք շարժվում էինք շատ դանդաղ: Տակին աչքը չէր կտրում պայծառ լուսապսակից, որ լուսավորում էր ծովի հատակը մոտ տասներկու ոտնաչափ լայնությամբ դեպի չորս կողմը և երգում էր քթի տակ: Ռիթմիկ ճռռում էին թիակները. նավակի մի կողմում ընկած էր ութ ոտնաչափ մի ձող, ծայրին՝ հինգ սարսափելի ատամներ:

Ես նավախելին տեսա ձիթապտղի յուղով լի շիշը, որը ձկնորսի հանդերձանքի պարտադիր մասն է: Թեթև քամու ժամանակ, երբ ջուրն սկսում է ծփալ, բավական է շշից մի քիչ յուղ ցայտեցնել ջրին, և ծովի ալեկոծված մակերեսն իսկույննեթ հրաշքով կխաղաղվի: Մենք դանդաղ մոտենում էինք Պոնդիկոնիսի սև եռանկյունուն, ուր խութերն էին, և երբ մոտեցանք դրանց, Տակին դադարեց թիավարել ու ասաց.

— Նախ մենք այստեղ մի քիչ կմնանք, մինչև որ ես մի բան որսամ, և հետո կիջնես խութերի վրա և կորսաս ինչ ուզես:

Ես հաճույքով համաձայնվեցի: Շատ էի ուզում տեսնել, թե ինչ պետք է Տակին անի իր վիթխարի հնգաժանիով: Նավակն սկսեց դանդաղ թեքվել դեպի մեծ խութը: Լամպը լուսավորում էր ստորջրյա զարմանալի ժայռերը, որոնք ծածկված էին վարդագույն ու մուգ կարմիր ջրիմուռներով և նման էին փարթամ կաղնիների: Կռանալով ջրի վրա, ես ինձ պատկերացնում էի լայնատարած թևերով թռչուն, որ ճախրում է աշնան խայտաբղետ անտառի վրայով:

Հանկարծ Տակին դադարեցրեց թիավարել, զգուշորեն թիերն ընկղմեց ջրի մեջ, որ արգելակի ընթացքը: Նավակն արդեն գրեթե անշարժ էր, երբ նա ձեռքն առավ հնգաժանին:

— Նայի՛ր, — ասաց նա, — ցույց տալով ստորջրյա ժայռի տակի ավազները: — Ակորպիոս:

Սկզբում ես ոչինչ չէի տեսնում, բայց հետո հասկացա, թե ուր է նա ցույց տալիս: Այնտեղ, ավազի վրա, պառկած էր երկու ոտնաչափ երկարությամբ մի ձուկ: Նրա մեջքին բարձրանում էր վիշապի կատար հիշեցնող սուր փշերի մի ամբողջ անտառ. ավազի վրա տարածվել էին վիթխարի լողակները: Ձկան գլուխը չափազանց լայն էր, ոսկեգույն աչքերով ու զայրացկոտ, ուռած բերանով: Բայց ինձ ամենից շատ զարմացրին նրա գույները: Ձուկը ներկված էր կարմրավուն գույներով՝ սկսած վառ կարմրից մինչև գինեգույնը, և ծածկված էր սպիտակ կետերով ու բծերով: Ավազի վրա փռված այս վառ գեղեցկուհու տեսքը շատ ինքնավստահ էր ու վտանգավոր:

— Նա շատ համեղ միս ունի, — ի զարմանս իմ շշնջաց Տակին, որովհետև ձուկն ինձ բացառիկ թունավոր թվաց:

Տակին դանդաղորեն հնգաժանին իջեցրեց ջուրը և աստիճանաբար դրոյմդրոյմի ետևից, սկսեց ձկանը մոտեցնել ատամները: Ամեն ինչ խաղաղ էր, լավում էր միայն լապտերի զայրացկոտ թշնոցը: Հնգաժանին դանդաղ մոտենում էր ձկանը: Ես շունչս պահեցի: Այդ խոշոր ոսկեակն ձուկը, մտածում էի ես, հավանաբար կնկատի իրեն մոտեցող չար ճակատագիրը: Հանկարծ պոչը թափ կտա, կբարձրացնի ավազի հողմ և՛ հետքն անգամ էլ չի մնա: Բայց ո՛չ, նա դեռ շարունակում էր պառկած մնալ, և շատ լուրջ տեսքով կուլ էր տալիս ջուրը: Երբ ատամներն արդեն նրանից մի ոտնաչափ էին հեռու, Տակին կանգ առավ: Ես տեսա, թե ինչպես նրա ձեռքը, սեղմելով հնգաժանին, փոքրիկ փոխեց դրությունը: Մի ինչոր պահ, որն ինձ հավիտենականություն թվաց, նա կանգ առավ անշարժ և հանկարծ այնպիսի արագությամբ, որ ես պարզապես չտեսա այդ շարժումը, բոլոր հինգ ատամները խրեց ձկան մեծ գլխի ուղիղ ծոծրակի մեջ. ավազի ու արյան ամպ բարձրացավ. ձուկն այնպես էր գալարվում, որ նրա մեջքի փշերը խրվեցին հնգաժանու մեջ, բայց դուրս պրծնել չկարողացավ: Տակին չափազանց ճարպկորեն էր հասցրել հարվածը: Արագորեն ձեռքիցձեռք փոխելով ձողը, նա ջրից դուրս հանեց այն, և ձուկը թաքրտաց

նավակի հատակին: Ես մոտեցա, որ օգնեմ Տակիին՝ ձկանը հանելու ատամների միջից, բայց նա ինձ կտրուկ ետ մղեց:

— Զգույշ, — ասաց նա: — Ակորպիոսը վտանգավոր ձուկ է:

Ես նայում էի, թե ինչպես էր նա թիաբերանով հնգաժանուց հանում ձուկը, և չնայած ձուկը պետք է մեռած լիներ, բայց դեռ շարունակում էր գալարվել ու թայրտալ և նավակողին խրեց իր մեջքի սուր փշերը:

— Նայի՛ր, նայի՛ր, — ասաց Տակին: — Հիմա հասկանո՞ւմ ես, թե ինչու ենք նրան անվանում սկորպիոս: Եթե նրան հաջողվեր մարմնիդ մեջ խրել այդ փշերը, սուրբ Սպիրիդո՛ն, ինչ անտանելի ցավ կպատճառեր: Դու ստիպված կլինեիր անմիջապես հիվանդանոց գնալ:

Ճարպկորեն գործի դնելով թիերն ու հնգաժանին, Տակին ձկանը օդ բարձրացրեց և նետեց դատարկ նավթամանի մեջ, ուր նա ոչ ոքի չէր կարողանա վնաս տալ: Ես հարցրի, թե ինչո՞ւ են նրան համեղ համարում, եթե այդքան թունավոր է:

— Աա՛, — ասաց Տակին, — դա միայն նրա փշերին է վերաբերում: Դրանք կտրում են, իսկ նրա միսը մեղրի նման քաղցր է: Ես ձուկը քեզ կտամ, երբ դու տուն կգնաս:

Նա նորից թիերը ձեռքն առավ, և նավակը ճռռալով սահեց խութերի երկայնքով: Որոշ ժամանակ անց Տակին նորից կանգ առավ: Հատակն այստեղ ավազոտ էր, միայն տեղտեղ կանաչին էին տալիս մատղաշ ջրիմուռները: Նա նորից դանդաղեցրեց ընթացքը և ձեռքն առավ հնգաժանին:

— Նայի՛ր, — ասաց նա, — ութոտնիկ:

Հուզմունքից շունչս կտրվեց, որովհետև մինչև այդ ես տեսել էի միայն անկենդան ութոտնիկներ, որոնց վաճառում էին քաղաքում, և համոզված էի, որ նրանք բոլորովին նման չէին կենդանի ութոտնիկներին, բայց որքան էլ աչքերս լարում էի, ավազոտ հունով հատակն ինձ միանգամայն անկենդան էր թվում:

— Ա՛յ այնտեղ, այնտեղ, — ցույց էր տալիս Տակին, զգուշորեն ջուրն իջեցնելով հնգաժանին, — չե՞ս տեսնում: Աչքերդ հո ծոծրակիդ չե՞ն, ա՛յ, նայիր, արդեն դիպչում են նրան:

Բայց ես դեռ ոչինչ չէի տեսնում: Տակին հնգաժանին մի ոտնաչափ էլ ցած իջեցրեց:

— Դե, հիմա տեսնո՞ւմ ես, հիմարիկ, — ծիծաղեց նա: — Հենց ատամների տակ է:

Եվ հանկարծ տեսա: Ես մինչ այդ էլ նայում էի այնտեղ, բայց ութոտնիկն այնքան գորշ էր և այնպես միաձուլվել էր ավազին, որ տարբերել նրան ծովի հատակից գրեթե անհնարին էր: Նա պառկել էր ավազի վրա, շոշափուկներով շրջապատված, ու նրա ճաղատ, գմբեթաձև գլխից մեզ էին նայում սարսափելի մարդկային, դժբախտ աչքերը:

— Մե՛ծ է, — ասաց Տակին:

Նա թեթևակի շարժեց մատները, որ սեղմել էին հնգաժանին, բայց շարժումն անզգույշ էր: Ութոտնիկը վայրկենաբար իր գորշ ավազամոխրագույն երանգը փոխեց վառ կանաչի ապշեցուցիչ երանգներով, ծծափողից բաց թողեց ջրի մի շիթ և, թաքնվելով ավազի ամպի մեջ, փախավ: Նա սուրում էր ջրի միջով, շոշափուկները ետ ծալած, հիշեցնելով թռչող աերոստատ:

— Ա, գամմոտո՛՛, — բացականչեց Տակին:

Նա ցած գցեց հնգաժանին, ձեռքն առավ թին և արագ հետևից ութոտնիկին: Ութոտնիկն, ըստ երևույթին, քնքշորեն հավատում էր իր քողարկմանը, քանի որ երեսուն ոտնաչափ այն կողմ նորից իջավ ջրի հատակը:

Տակին նորից նավակը մոտեցրեց նրան և սկսեց հնգաժանին ջուրն իջեցնել: Այս անգամ նա գործում էր շատ զգույշ: Երբ ատամներն արդեն գտնվում էին ութոտնիկի գմբեթաձև գլխից ընդամենը մի ոտնաչափ հեռու, Տակին ամուր սեղմեց հնգաժանին և հարվածեց: Ամպի նման պտտվեց արծաթավուն ավազը, ցնցվեցին ու կծկվեցին շոշափուկները ու փաթաթվեցին հնգաժանու շուրջը: Ութոտնիկի մարմնից դուրս ցայտեց թանաքագույն հեղուկի շիթ, ծածանվեց սև ժանյակձև քողի նման ու ծխի պես սողաց ավազի վրայով: Տակին այժմ ուրախությունից ծիծաղում էր: Նա արագորեն հնգաժանին վեր քաշեց և, երբ ութոտնիկին նետեց նավակի մեջ, երկու շոշափուկները կպան նավակի կողին: Տակին կտրուկ շարժում կատարեց, և շոշափուկները պոկվեցին այնպիսի ձայնով, ասես պոկում էին կպչուն ծեփունը, միայն թե ձայնը հազար անգամ ավելի ուժեղ էր: Բռնելով ութոտնիկի լայրծուն ու կլոր մարմնից, Տակին ճարպկորեն հանեց այն հնգաժանու ատամներից, և հետո, ի զարմանս իմ, բռնեց այդ մեղուզայի թպրտացող գլուխը և մոտեցրեց իր դեմքին: Շոշափուկները գալարվեցին նրա ճակատի, վզի ու այտերի շուրջը, և ծծիչները սպիտակ հետքեր թողեցին նրա թուխ մաշկի վրա: Ուշիուշով փնտրելով տեղը, Տակին հանկարծ ատամները խրեց ութոտնիկի հենց սրտի մոտ, գլուխը թափ տվեց ու ատամները կրճտացրեց, ինչպես առնետի ողնաշարը կտրորող շուն: Հավանաբար նա կծել էր կենսականորեն կարևոր ներվերի հանգույցը, որովհետև շոշափուկները անմիջապես անջատվեցին նրա գլխից և թուլացած կախ ընկան: Միայն դրանց ծայրերն էին մի քիչ ցնցվում ու գալարվում: Տակին ութոտնիկին նետեց այնտեղ, ու ընկած էր սկոպիոսը, թքեց ջրի մեջ և, ծովի ջրից մի բուռ վերցնելով, ողողեց բերանը:

— Դու ինձ հաջողություն բերիր, — ասաց նա ժպտալով և շրթունքները սրբեց:
— Ամեն գիշեր չէ, որ ինձ հանդիպում են և՛ ութոտնիկ, և՛ սկորպիոս:

Բայց երևում է Տակիի հաջողությունն այսքանով վերջացավ: Որքան էլ մենք դարձյալ շրջանցեցինք խութը, մեզ էլ ոչինչ չհաջողվեց որսալ: Մի տեղ, խութի ճեղքում տեսանք մուրենայի գլուխ, գլխի տեսքը խիստ կատաղի էր և կլիներ շնիկի գլխի չափ: Բայց երբ Տակին հնգաժանին ջուրն իջեցրեց, մուրենան հանգիստ, մեծ արժանապատվությամբ և մեղմ նազանքով, թաքնվեց խութի խորքում: Այլևս մենք նրան չտեսանք: Անձամբ ինձ դա միայն ուրախացնում էր, քանի որ մուրենան մոտ վեց ոտնաչափ երկարություն ուներ, իսկ վեցոտնաչափանոց մուրենայի հետ մարտի բռնվելը մի այնպիսի փորձություն էր, որից նույնիսկ ես, կրքոտ բնասերս, շատ հանգիստ կարող էի հրաժարվել:

— Դե ինչ արած, — փիլիսոփայորեն նկատեց Տակին, — հիմա գնանք քո որսի ետևից:

Նա ինձ տարավ ամենամեծ խութի մոտ և իմ ողջ հանդերձանքով իջեցրեց նա հարթ գագաթին: Զինվելով ցանցով, ես քայլում էի խութի եզրով, իսկ Տակին լողում էր մոտ վեց ոտնաչափ հեռավորությամբ իմ ետևից և լուսավորում էր այս գողտրիկ գեղեցկությունը: Այստեղ այնքան բազմազան կենդանիներ կային, որ ես հույս չունեի դրանց բոլորին որսալ:

Այստեղ կային փխրուն, ոսկեկարմիր ծովաշնիկներ և փոքրիկ, լուցկու հատիկի կեսի չափ վառ կարմիր ձկնիկներ՝ մեծ ու սև աչքերով, և էլի այդ նույն չափի գորշ երկնագույն ու կապույտ շերտերով ձկնիկներ արնակարմիր ու դյուրաբեկ օֆիուրները կամ օձապոչիկները՝ իրենց նուրբ, երկար, ծակող ճառագայթներով, որոնք անընդհատ մերթ կծկվում են, մերթ բացվում: Դրանց պետք է շատ զգույշ բռնել, ամենափոքր ցնցումից նրանք հուսահատ առատաձեռնությամբ այս ու այն կողմ են նետում իրենց բոլոր ճառագայթները:

Այնտեղ կային խիտունջմաշիկներ. եթե դրանց շրջես, ապա մի կեսի վրա կտեսնես որոշակի ելուստ, այնպես որ ամբողջ խեցին իսկապես նմանվում է տնային մաշված կոշիկի: Այնտեղ կային նաև ցիպրեի խեցիներ, մի քանիսը սպիտակաթույր էին, փոքրինչ հաստակող, մյուսները՝ բաց մարմնագույն, խիտ ծածկված բոսորագույն ու սև կետերով: Ժայռերի ճեղքերից վիթխարի տամկաճճիների պես դուրս էին ցցվել խիտոնների խեցիները, մոտ երկուսուկես դյույմ երկարությամբ: Մի տեղ ես նկատեցի լուցկու տուփի չափ թանաքաձկան և, փորձելով նրան բռնել, քիչ էր մնում խութից ցած ընկնեի: Մեծ վիշտ պատճառելով ինձ, նա ծլկեց: Արդեն կես ժամ հետո ես տեսա, որ իմ բոլոր բանկաները, սրվակներն ու տուփերը բերնեբերան լիքն են, ու կամա թե ակամա ստիպված էի վերադառնալ նավակ:

Տակին բարձր ու ուրախ տրամադրությամբ ինձ բերեց իմ սիրելի ծովախորշը և սկսեց հետաքրքրությամբ դիտել, թե ինչպես են զգուշորեն հանում հավաքածս նմուշները ու տեղավորում լճախորշում: Հետո մենք լողացինք դեպի Մենելաուսի նավամատույցը: Երբ ես նավակից ցած իջա, Տակին վերցրեց պարանը, անցկացրեց այժմ արդեն մեռած սկորպենայի խոիկների միջով և տվեց ինձ:

— Հայտնիք քո մայրիկին, — ասաց նա — որ սա պետք է պատրաստել կարմիր պղպեղով ու ձիթապտղի յուղով և ուտել կարտոֆիլով ու մատղաշ դդիմկով: Շատ համեղ է լինում:

Ես շնորհակալություն հայտնեցի նրան և՛ ձկան համար, և՛ ինձ հետ այդքան երկար զբաղվելու համար:

— Մի անգամ էլ ձկնորսություն կանենք, — ասաց նա, — ես այստեղ կլինեմ մեկ շաբաթ հետո: Չորեքշաբթի կամ հինգշաբթի օրը: Քեզ իմաց կտամ, երբ որ գամ:

Ես շնորհակալություն հայտնեցի և ասացի, որ կսպասեմ անհամբեր: Տակին նավակը ետ հրեց ափից և ձողը ձեռքին լողաց դեպի Բենիցեսու:

Ես բղավեցի նրա ետևից. «Երջանի՛կ եղիր»:

— Պաստո կալո, — պատասխանեց նա: — Հաջողություն են ցանկանում:

Ես շրջվեցի ու հոգնած բարձրացա բլուրն ի վեր: Մարսափով պարզեցի, որ արդեն գիշերվա ժամը երեքի կեսն է: Մայրս հիմա, իհարկե, ոչ մի տարակույս չունի, որ խեղդվել եմ, ընկել եմ շնաձկան երախը, կամ էլ ինձ հետ տեղի է ունեցել ոչ պակաս սարսափելի մի ուրիշ բան: Մակայն ես հուսով էի, որ նրա գայրույթը կմեղմացնեմ սկորպենայով:

Մրտենու թավուտները

Մեր տնից մոտ կես մղոն հեռավորության վրա, հյուսիսային կողմից, ձիթենու անտառները նոսրանում են, և դրանց փոխարինում են հարթ փոսորակները՝ հիսունվաթսուն ակր տարածությամբ: Ձիթենու ծառեր այստեղ չկան, չորս կողմը միայն տարածվել են միայն մրտենու մացառուտներ, չոր քարքարոտ բացատներ, ուր հուրհրում են ուղտափշի վառ երկնագույն գլխիկները և ծովաստիխի թեփուկավոր մեծ կոճղեզները:

Սա իմ սիրած որսավայրն էր, քանի որ այստեղ բնակվում էին բազմաթիվ հիանալի կենդանիներ: Մենք Ռոջերի հետ միասին տեղավորվում էինք մրտենու թփերի հոտավետ ստվերում և դիտում էին, թե ինչպես են մեր առջևով սլանում

հազար ու մի միջատներ: Օրվա որոշակի ժամերին մրտենու ճյուղերի մեջ թագավորում էր ճիշտ այնպիսի աշխուժություն, ինչպես քաղաքի կենտրոնական փողոցում: Մրտենու թավուտներում լիքն էին վառ կանաչ թևերով խոշոր աղոթարարները, որոնց երկարությունը մոտ երեք դյույմ էր: Նրանք օրորվում էին ճյուղերի արանքում իրենց բարակ ոտքերի վրա, աղոթքի նման վեր բարձրացնելով առջևի գույգ ոտքերը, որոնք սարսափելի մագիլներ ունեին: Նրանց սուր դնչիկները, դուրս պրծած հարդագույն աչքերը պտտվում էին մերթ այս, մերթ այն կողմ, ոչինչ բաց չթողնելով տեսադաշտից: Եթե սպիտակ կաղամբաթիթեռը կամ էլ սադաֆաթիթեռը իջնում էին մրտենու ողորկ տերևի վրա, աղոթարարը մոտենում էր նրան մեծ զգուշությամբ, շարժվելով գրեթե աննկատ: Նա շարունակ կանգ էր առնում, որպեսզի օրորվեր ոտքերի վրա, դրանով իսկ ստիպելով թիթեռին հավատալ, թե ինքը ընդամենը քամուց տարուբերվող տերևիկ է:

Մեկ անգամ ես տեսա, թե ինչպես աղոթարարը գաղտագողի հարձակվեց մի մեծ մահառնի վրա, որը շարժում էր թևերը, տաքանալով արևի տակ և մտածկոտ ինչոր բան էր երագում: Մակայն վերջին բույսին աղոթարարը նահանջեց և մահառնի մարմնից բռնելու փոխարեն, ինչպես պատրաստվում էր անել, կառչեց նրա թևից: Ցնցվելով, մահառնը սթափվեց նիրհից և թևերը այնպես ուժգին թափահարեց, որ աղոթարարի առջևի մասը վեր բարձրացավ տերևներից: Մի քանի ուժեղ թափահարում, և, ի հեճուկս աղոթարարի, մահառնը ընկնելով մի կողքի, թռավ գնաց պոկված թևով: Փիլիսոփայական հանդարտությամբ, աղոթարարը նստեց տերևին և սկսեց ոչնչացնել իր ճանկում մնացած թևի կտորը:

Ուղտափշերի միջև գտնվող քարերի տակ վխտում էին զարմանալի քանակությամբ ամենատարբեր արարածներ, թեև արևն այնպես էր այրում, որ հողը քարի պես պինդ էր և այնպես տաք, որ նրա վրա կարելի էր ձվածեղ անել: Այստեղ բազմանում էին արարածներ, որոնց տեսքից ես սարսափում էի: Դրանք տափակ բազմոտանիներ էին, մոտ երկու դյույմ երկարությամբ, երկու կողմից խիտ ծոպքերի պես շարժվում էին երկար ու բարակ ոտքերը: Բազմոտանիներն այնքան տափակ էին, որ կարող էին թափանցել ամենաաննշան ճեղքի մեջ, և շարժվում էին հսկայական արագությամբ, ավելի շուտ սահում էին գետնի վրայով, քան վազում, — այսպես սառույցի վրա գլորվում է տափակ քարը: Լատիներեն դրանք կոչվում են *Scutigera*, և ես չեմ պատկերացնում մի ուրիշ անուն, որն այսքան հարմար լիներ այս զգվելի արարածի համար:

Քարերի արանքներում, այս ու այնտեղ կարելի էր տեսնել կարծր հողի մեջ փորած անցքեր, յուրաքանչյուրը՝ կես կրոնանոց դրամի չափ կամ մի քիչ ավելի. ներսից դրանք պատված են մետաքսե ոստայնով, իսկ մուտքի վերևում ոստայնը կազմում էր երեք դյույմանոց օղակ: Դրանք մորմերի՝ շիկակարմիր ցանով շոկոլադագույն, վիթխարի, գեր սարդերի որջերն են: Լայն տարածած ոտքերով նրանք զբաղեցնում են, թերևս, սուրճի ափսեի չափ տարածություն, իսկ նրանց մարմինը

հունական ընկույզի կեսի չափ է: Սրանք շատ ուժեղ, արագոտն և անխիղճ որսորդներ են, օժտված ապշեցուցիչ չարությամբ: Մորմերը որսի են դուրս գալիս հիմնականում գիշերը, բայց երբեմն ցերեկվա ժամերին էլ կարելի է տեսնել, թե ինչպես են նրանք իրենց ոտքերով արագարագ քայլում ուղտափշերի մեջ, որս որոնելով: Մովորաբար, մարդ տեսնելիս, նրանք փախչում և թաքնվում են մրտենիների մեջ, բայց մի անգամ ես տեսա մի սարդի, որն այնպես էր տարվել որսով, որ ինձ բոլորովին մոտիկ թողեց:

Նա նստել էր երկնագույն ուղտափշի ցողունի վրա, իր բնից մոտ վեցոթ ոտնաչափ հեռու, շարժում էր առջևի ոտքերը և ուշադիր դիտում էր չորս կողմը, հիշեցնելով այն որսորդին, որը բարձրացել է ծառը, որ տեսնի, արդյոք մոտակայքում որս չկա: Այսպես տևեց հինգ րոպե: Հետո սարդը իջավ ուղտափշից և վճռական տեսքով սլացավ ինչոր տեղ, ասես իր դիտակետից հարմար որս էր տեսել: Շուրջս նայելով, ես ոչ մի տեղ կյանքի նշան չնկատեցի: Ի դեպ ես ամենևին էլ հավատացած չէի, որ մորմը այդպիսի սուր տեսողություն ունի: Մակայն նա քայլում էր շատ վստահ և շուտով հայտնվեց կորքսի թփերի մոտ, այս գեղեցիկ, երերուն բույսի գլխիկներն իրենց սերմերով հիշեցնում են հացի հյուսած բատոնչիկներ: Մոտենալով, հանկարծ գլխի ընկա, թե ինչ որսի ետևից է ընկել մորմը: Բաց գույնի խոտի նուրբ ավելիկների տակ երևում էր արտույտի բույնը և նրա մեջ՝ չորս ձու: Չվերից մեկից հենց նոր դուրս էր եկել վարդագույն, փափկամազ թռչնակը, որը դեռևս թաքտում էր կճեպի բեկորների մեջ:

Մինչ ես խելացի բան կանեի թռչնակին փրկելու համար, մորմը մոտեցավ բնի եզրին: Մի վայրկյան դանդաղելով, այդ սարսափելի հրեշը արագորեն դեպ իրեն քաշեց դողացող փոքրիկին և նրա մեջքը խրեց իր երկար, կեռ խայթոցները: Չոհը երկու անգամ հազիվ ծվծվաց և, լայն բացելով բերանը, ցնցվեց մազմզոտ սարդի գրկում: Շուտով թույնը ներգործեց. փոքրիկը մի պահ քարացավ, և ապա, թուլանալով անկենդան ընկավ: Սարդը նստել էր անշարժ, մինչև որ համոզվեց, որ թույնը արել է իր գործը: Այնժամ նա շուռ եկավ ու գնաց հեռու, ծնոտների մեջ սեղմելով ճոճվող թռչնակին: Նա նմանվում էր երկարատուն քերծեի, որն իր ատամների մեջ տանում է կաքավին: Ոչ մի տեղ կանգ չառնելով՝ մորմն արագորեն հասավ իր բույնը և անհետացավ այնտեղ թռչնակի թույլ, խղճուկ մարմնի հետ:

Այս հանդիպումն ինձ ապշեցրեց երկու պատճառով. նախ՝ ես նույնիսկ չէի էլ պատկերացնում, որ մորմը կարող է հաղթել այնպիսի մեծ կենդանի արարածի, ինչպիսին թռչնիկն է, երկրորդ՝ ինձ համար անհասկանալի էր, թե որտեղի՞ց նա գիտեր, որ խոտի մեջ բույն կա: Իսկ նա, անկասկած, այդ գիտեր քանի որ առանց տատանվելու գնաց ուղիղ դեպի բույնը: Ուղտափշից մինչև բույնը մոտ երեսունհինգ ոտնաչափ էր (ինչ ես որոշեցի քայլելով). այսպիսի հեռավորությունից, մտածում էի ես, ոչ մի սարդ չի կարողանա տեսնել լավ քողարկված բույնը և նրա միջի թռչնիկին: Մնում էր միայն հոտառությունը, բայց այստեղ էլ (թեև ես գիտեի, որ կենդանիները կարող են զգալ թույլ ու նրբին հոտեր, ինչն անմատչելի է մեր կոպիտ քթածակերին)

մորմը պետք է ունենար գերբնական հոտառություն, որ այսպիսի խաղաղ օրը, մոտ երեսունհինգ ոտնաչափ հեռավորությունից, զգար արտույտի ձագի հոտը: Ես կարող էի միայն ենթադրել. սարդն այդ բույնը հայտնաբերել էր իր նախկին զբոսանքների ժամանակ, և հետո ժամանակ առ ժամանակ ստուգել, թե չի՞ հայտնվել արդյոք այնտեղ ձագուկ: Սակայն այսպիսի բացատրությունն ինձ չբավարարեց: Չէ՞ որ ես սարդին օժտեցի մտածելու ընդունակությամբ. իսկ այս ունակությունը նա, իհարկե, չունի: Նույնիսկ իմ ամենագետ Թեոդորը չկարողացավ լուծել այս խնդիրը: Իսկ ես միայն մի բան գիտեմ՝ արտույտների դժբախտ գույգին այդ տարի չհաջողվեց մեծացնել և ոչ մի ձագուկի:

Մրտենիների թավուտի մյուս բնակիչներից իմ երևակայությունը առանձնապես գրավում էին մրջնառյուծների թրթուրները. չափահաս մրջնառյուծները լինում են զանազան մեծության և գրեթե միշտ տարբերվում են բավական գորշ գունավորությամբ: Նրանք նման են ցնդած, զգզված ճպուռի: Նրանց թևիկները կարծես թե բոլորովին համամասնական չեն մարմնի հետ, և թռիչքի ժամանակ մրջնառյուծները դրանցով հուսահատորեն ծեծում են օդը, ասես ստիպված են վիթխարի ուժ գործադրել: Դրանք շատ բարեհոգի, ծույլ արարածներ են և ի վիճակի չեն որևէ մեկին վնասելու, ինչ չես ասի նրանց թրթուրների մասին: Ինչպես գիշատիչ ճպուռի թրթուրն է գործում լճում, այնպես մրջնառյուծի թրթուրն է գործում մրտենու թփերի միջև ընկած չոր ավազուտներում: Այդ թրթուրների առկայության մասին մատնանշում են միայն կոնաձև փոսիկները այն տեղերում, ուր հողը բավական մանրահատիկ է ու փխրուն: Երբ առաջին անգամ ինձ այդպիսի ձագարներ հանդիպեցին, ես նույնպես չէի կարողանում պատկերացնել, թե ով է դրանք փորել: Գուցե՞ մկներն են այստեղից ինչոր արմտիքներ հանել: Ես նույնիսկ չգիտեի, թե այդ ձագարների խորքում, ավազի մեջ թաղված, նստում է ճարտարապետը՝ միշտ պատրաստ, միշտ զգոն, վտանգավոր՝ ինչպես թակարդը: Հետո ես տեսա այդ ձագարներից մեկը գործողության մեջ և առաջին անգամ հասկացա, որ դա ոչ միայն թրթուրի բնակարանն է, այլև հրեշավոր ծուղակ:

Ահա անհանգիստ շտապում է մի ինչոր մրջյուն (ինձ միշտ թվում էր, որ իր գործով վազվզելիս մրջյունը միշտ երգում է քթի տակ), դա կարող է լինել փոքրիկ սև մրջյուն, կամ մեկն այն խոշոր, կարմիր, միայնակ մրջյուններից, որ վխտում են չորս կողմը, կարմիր փոքրիկը հրանոթի պես ուղղելով երկինք: Բայց ինչպիսին էլ որ լինի մրջյունը, բավական է ոտքը դնի այդ փոսիկներից մեկի եզրին, և նա անմիջապես կզգա, որ փոսը երբեքում է, և ինքն էլ կսողա ցած, դեպի ձագարի հիմքը: Մրջյունը կշրջվի ետ, կփորձի դուրս գալ փոսից, բայց հողն ու ավազը կծորան նրա ոտքի տակից: Երբ հողահյուսքերից մեկը հասնում է ձագարի հիմքին, թրթուրի համար այն ծառայում է ազդանշան, որ ժամանակն է գործի անցնելու: Եվ այստեղ գնդացրային գերարագությամբ մրջյունի վրա է թափվում ավազ ու հող, որը թրթուրն ապշեցուցիչ ճարպկությամբ շարտում է փոսի հատակից: Անկայուն թեքության վրա անընդմեջ գնդակոծությունից մրջյունը կորցնում է հենման կետը և խայտառակ կերպով

գլորվում փոսի հատակը: Ավագի միջից վայրկենապես դուրս է ցցվում թրթուրի հարթ գլխիկը՝ վիթխարի, մանգաղի նման կեռ երկու ծնոտներով: Նրանք խրվում են դժբախտի մարմնի մեջ, և թրթուրը նորից է ծածկվում ավագի տակ, որը թայրտացող մրջյունին տանում է նրա իսկ գերեզմանը: Քանի որ ես համարում էի, որ մրջնատյուծի թրթուրները անագնիվ հաղթանակ են տանում բարեհոգի ու բավական լուրջ մրջյունների նկատմամբ, առանց կարեկցանքի նրանց հանում էի փոսից, տանում տուն և պահում մառյայե փոքրիկ վանդակներում, մինչև որ դառնում էին չափահաս մրջնատյուծներ: Եթե դրանք ինձ համար նոր տեսակներ էին լինում, ես նրանց միացնում էի իմ հավաքածուին:

Մի անգամ ես ու Ռոջերն ընկանք մի այնպիսի կատաղի ամպրոպի տակ, երբ երկինքը կապտասև է դառնում, իսկ կայծակները երկինքը ծածկում են արծաթավուն խիտ նախշերով: Շուտով անձրև սկսվեց, խոշոր ծանր կաթիլներով, տաք, ինչպես նոր կթած կաթը: Երբ ամպրոպը դադարեց, լվացված երկինքը փայլեց ջինջ լազուրով, խոնավ հողից գալիս էին զարմանալի, գրեթե գաստրոնոմիական բուրմունքներ՝ խնձորով կարկանդակի կամ կեքսի հոտ, իսկ արևի տակ չորացող ձիթենու բները ծխում էին՝ ասես կրակով բռնկված:

Ես ու Ռոջերը սիրում էինք այս ամառային ամպրոպները: Հաճելի էր ջրափոսերի մեջ չլմփացնել և զգալ, թե ինչպես է հագուստս թրջվում տաք անձրևից: Ռոջերը, բացի այդ, մեծ հաճույքով հաչում էր կայծակի վրա: Երբ անձրևը դադարեց, մենք մտանք մրտենու մացառուտների մեջ: Ես հույս ունեի, որ ամպրոպից հետո որոշ կենդանիներ դուրս կգան իրենց թաքստոցներից, ուր նրանք սովորաբար թաքնվում են շոգից: Եվ իսկապես, մրտենու ճյուղերի վրայով դեմդիմաց սողում էին մեղրասաթի գույնի երկու ճարպոտ խխունջներ և կանչող շարժումներով տարուբերում էին եղջյուրիկները: Ես գիտեի, որ այս խխունջները ամառվա ամենաթունդ շրջանում սովորաբար քնում են: Ամրանալով հարմար ճյուղի վրա, նրանք խեցու մուտքը փակում են թղթի նման բարակ կափարիչով և քաշվում են իրենց պարույրների խորքը, որ խոնավությունը մարմնում պահեն և պաշտպանվեն արևի կիզիչ ճառագայթներից:

Կատաղի ամպրոպը, հավանաբար, արթնացրել էր խխունջներին և հաղորդել ուրախ ու ռոմանտիկ տրամադրություն: Նրանք շարունակեցին սողալ մեկը մյուսի մոտ, մինչև որ նրանց եղջյուրիկները հպվեցին իրար:

Այդ պահին խխունջները կանգ առան ու իրար նայեցին երկար ու լուրջ հայացքով: Հետո նրանցից մեկը թեթևակի փոխեց դիրքը, ճանապարհ տալով մյուսին: Երբ երկու խխունջներն էլ գտնվեցին կողքքողքի, տեղի ունեցավ մի այնպիսի բան, որն ինձ ստիպեց չհավատալ սեփական աչքերիս: Խխունջներից մեկի կողքից և միաժամանակ նաև մյուսի կողքից ցցվեց սպիտակ փոքրիկ սլաքով բարակ, թելի պես մի ինչոր բան: Առաջին խխունջի սլաքը խրվեց երկրորդ խխունջի կողքը և

անհետացավ այնտեղ, իսկ երկրորդ խխունջի սլաքը այդ նույն ձևով խրվեց առաջինի կողքի մեջ: Եվ ահա նրանք նստած էին կողքկողքի, երկու սպիտակ թելիկներով կապված, ասես երկու առագաստանավեր՝ ճոպաններով իրար կապված:

Հենց միայն դա արդեն իսկական հրաշք էր, բայց հետո տեղի ունեցան էլ ավելի զարմանալի հրաշքներ: Թելիկներն աստիճանաբար սկսեցին կարճանալ և խխունջներին մոտեցնել իրար: Ես նայում էի աչքերս չռած, գրեթե քիթս կպցնելով խխունջներին, և եկա մի անհավանական եզրակացության. յուրաքանչյուր խխունջ իր մարմնի ինչոր մեխանիզմի օգնությամբ (կարապիկի նման) կծկում է ճոպանիկը և դեպ իրեն ձգում մյուս խխունջին, մինչև որ նրանք երկուսն էլ կիպ սեղմվեցին իրար: Նրանց մարմինները շատ կիպ էին իրար կպած, այնպես որ ես չկարողացա տեսնել, թե ինչ է այնտեղ իսկապես տեղի ունենում: Այսպիսի էքստազի մեջ խխունջները նստեցին մոտ տասնհինգ րոպե, իսկ հետո նույնիսկ, այսպես ասած, իրար հրաժեշտ չտալով, սողացին տարբեր կողմեր: Ոչ մեկի և ոչ էլ մյուսի մոտ չմնացին ոչ սլաքի և ոչ էլ թելի որևէ հետք, և ոչ մեկն էլ հիացմունք չէր արտահայտում սիրային կապի հաջող ավարտի առթիվ:

Տեսածս ինձ այնպես էր ցնցել, որ ես հազիվ դիմացա մինչև հաջորդ հինգշաբթի, երբ մեզ մոտ եկավ Թեոդորը, ու ես կարողացա նրան պատմել այդ ամենի մասին: Լսելով իմ պերճախոս նկարագրությունը թեթևակի ճոճվելով կրունկների վրա, Թեոդորը լրջորեն շարժում էր գլուխը:

— Ահա, այո, — ասաց նա, երբ ես ավարտեցի պատմությունս, — գիտես, քո բախտը իսկապես բերել է. . . Ես շատ եմ ուսումնասիրել խխունջներին, բայց երբեք այդպիսի բան չեմ տեսել:

Ես հարցրի, թե գուցե իմ աչքին երևացել են այդ բոլոր սլաքներն ու թելիկները:

— Ո՛չ, ո՛չ, — ասաց Թեոդորը, — բացարձակապես բոլորը ճիշտ է: Սլաքները կազմված են այնպիսի. . . հրմ, նյութերից. . . կալցիումի նման, և երբ նրանք խրվում են խխունջի մեջ, անհետանում են. . . լուծվում են: Հավանաբար, կարելի է կարծել, որ սլաքները առաջացնում են յուրատեսակ ծակոց, խուտուտ, որը խխունջներին. . . հրմ, երևի, դուր է գալիս:

Հետո ես հարցրի, իսկ ճի՞շտ է, որ խխունջները կծկում են իրենց թելիկները:

Այո, այո, միանգամայն ճիշտ է, — ասաց Թեոդորը: — Նրանք, երևում է, հրմ. . . ինչոր մեխանիզմ ունեն իրենց ներսում, որ կարող է թելը ներս քաշել:

Ես ասացի, որ ավելի զարմանալի բան ես դեռ չեմ տեսել:

— Այո, իհարկե: Դա զարմանալի է, — համաձայնեց Թեոդորը և հետո ավելացրեց մի այնպիսի բան, որից իմ շունչը կտրվեց: — Երբ նրանք մոտիկանում

են... հըմ... մի խխունջի արական կեսը մտնում է մյուսի կանացի կեսին, և ...ը... այսպես ասած, ընդհակառակը:

Անցավ մի քանի րոպե, նախքան ես կկարողանայի իմաստավորել այս ապշեցուցիչ հաղորդումը, իսկ հետո զգույշ հարցրեցի, ճի՞ շտ եմ արդյոք հասկացել, որ յուրաքանչյուր խխունջ միաժամանակ և էգ է, և արու:

— Հըմ: Այո՛, — ասաց Թեոդորը, — հերմոֆրոդիտ են:

Նա շոյեց մորուքը, ու նրա աչքերում առկայծեց կրակը: Լարրին, որի դեմքից սովորաբար չէր անցնում տառապալից արտահայտությունը, երբ ես ու Թեոդորը քննարկում էինք բնագիտության հարցերը, նույնպես ապշած էր խխունջների կյանքի վերաբերյալ այս ցնցող նորությունից:

— Դուք, իհարկե, կատակում եք, Թեոդոր, — հարցրեց նա: — Միթե ցանկանում եք ասել, որ յուրաքանչյուր խխունջ միաժամանակ և էգ է, և արու:

— Այո, իհարկե, — պատասխանեց Թեոդորը և հոյակապ զսպվածությամբ ավելացրեց: — Դա շատ հետաքրքիր է:

— Ա՛յ դա գո՛րծ է, — վրա բերեց Լարրին: — Ես գտնում եմ, որ դա անիրավացի է: Այս բոլոր անիծյալ լորձնեակները խելահեղների նման թափառում են թփերի մեջ և գայթակղում են իրար, ապրելով և այս և այն զգացումը: Իսկ ինչո՞ւ մարդկային սեռը չի ստացել այդ շնորհը: Այ թե ինչն է ինձ հետաքրքրում:

— Հըմ, բայց այդ դեպքում դուք ստիպված կլինեիք ձու ածել, — նկատեց Թեոդորը:

— Իսկապես, — ասաց Լարրին, — բայց դե դա հիանալի առիթ կլիներ կոկտեյլի հրավերից հրաժարվելու համար: Օրինակ, դուք ասում եք. «Մարսափելի ափսոսում եմ, որ չեմ կարող գալ: Ես պետք է ձու ածեմ»:

Թեոդորը փոթկաց:

— Խխունջները ձվի վրա չեն նստում, — բացատրեց նա, — նրանք ձվերը թաղում են խոնավ հողի մեջ և այլևս դրանց մասին չեն մտածում:

— Շատ վատ է, դաժան բան է այդպես խոսելը, — ասաց Լարրին, — դա կարող է Ջերրիի մոտ կոմպլեքս առաջացնել մինչև կյանքի վերջը:

Բայց եթե նույնիսկ այս զրույցն իմ մեջ կոմպլեքս առաջացրեց, ապա այն կապված էր միայն խխունջների հետ, և ես Ռոջերի հետ արդեն մտածում էի խոշոր արշավ կազմակերպել խխունջներ հավաքելու համար: Հավաքել տասնյակներով,

բերել տուն ու դնել բանկաների մեջ, որ հետո քեֆու ուզածի չափ նայեմ, թե ինչպես են նրանք սիրո սլաքներ ուղղում միմյանց: Թեև ես մի քանի շաբաթում հավաքեցի հարյուրավոր խխունջների, պահեցի նրանց բանկաների մեջ և շրջապատեցի ամենայն հոգատարությամբ (նույնիսկ նրանց համար ցնցուղով ամպրոպային հեղեղ սարքեցի), բայց ոչինչ չտեսա:

Միայն մեկ անգամ էլ ինձ հաջողվեց տեսնել այս արտառոց սիրախաղը, երբ Տասը սրբերի լեռան ժայռոտ լանջերին գտա մի զույգ հսկայական խողողի խխունջների: Իսկ բարձրանալ այնտեղ և բռնել այս խխունջներին ես կարողացա շնորհիվ այն բանի, որ մայրս ծննդյանս տարեդարձի առթիվ ինձ համար գնել էր մի փոքրիկ ավանակ, որի մասին ես շատ էի երագում:

Թեև Կորֆու գալուն պես ես տեսա, որ այստեղ շատ ավանակներ կան (կարելի է ասել նրանց վրա է հիմնված այս կղզյակի ամբողջ գյուղատնտեսությունը), բայց նրանք առանձնապես չէին զբաղեցնում իմ մտքերը, քանի դեռ մենք չէինք գնացել Կատերինայի հարսանիքին: Այնտեղ ես տեսա բազմաթիվ ավանակների իրենց իշուկներով, որոնցից շատերը ընդամենը մի քանի օրական էին: Ինձ գերեցին նրանց ուռուցիկ ծնկները, վիթխարի ականջները, անվստահ, դողացող քայլերը, և ես վճռեցի, որ անպայման պետք է ունենամ իմ սեփական իշուկը:

Ջանալով մորս տրամադրել այդ ուղղությամբ, ես նրան բացատրեցի, որ իշուկը ինձ հնարավորություն կտա տնից ավելի հեռու գնալ: Ինչու, հարցնում էի ես, չի կարելի, որ ես իշուկ ստանամ նվեր, ասենք ծննդյանս օրը: Որովհետև, — պատասխանում էր մայրս, նախ՝ իշուկը շատ թանկ է, և երկրորդ՝ տարվա այդ ժամանակ նորածին իշուկներ չեն լինում: Բայց եթե իշուկն այդքան թանկ արժի, շարունակում էի ես, ապա թող դա լինի մեկ նվեր՝ և՛ ծննդյան տոների առթիվ, և ծննդյանս օրվա: Ես հաճույքով կիրառարվեի մնացած բոլոր նվերներից և դրանք կփոխեի ավանակի հետ: Մայրս ասաց, որ ինքը կմտածի, իսկ ես իմ դառը փորձից արդեն գիտեի, թե դա ինչ է նշանակում՝ որ նա ամեն ինչ կմոռանա ամենամոտ ժամանակներում: Երբ իմ ծննդյան օրը մոտեցավ, ես մի անգամ էլ արտահայտեցի իմ բոլոր պատճառաբանություններն ավանակ ձեռք բերելու օգտին, բայց մայրս միայն կրկնում էր, թե մենք, իբր, դեռ կմտածենք:

Որոշ ժամանակ անց ձիթնու պուրակում, փոքրիկ պարտեզից մի քիչ հեռու, հայտնվեց Կոստասը, մեր սպասուհու եղբայրը՝ ուսին բամբուկի հսկայական կապոց: Ուրախ սուլելով, նա սկսեց գետնի մեջ փոսեր փորել և դրանց մեջ խրել բամբուկե ձողերը, այնպես որ շուտով կազմվեց մի ոչ մեծ քառակուսի: Նայելով Կոստասին ֆուքսիայի ցանկապատի միջով, ես հետաքրքրվեցի, թե ինչ է անում այնտեղ և, սուլելով Ռոջերին, գնացի նայելու:

— Տուն եմ կառուցում, — ասաց Կոստասը, — մայրիկիդ համար:

Ես զարմացա: Մորս ինչին է պետք այդ բամբուկե տունը: Գուցե նա ուզում է այնտեղ քնել, բացօթյա: Չէ, դա քիչ հավանական է: Մորս ինչին է պետք այս բամբուկե տունը, հարցրի ես Կոստասին:

— Ով գիտե, — ասաց նա ու նայեց ինձ մշուշոտ հայացքով, — գուցե նա ուզում է այնտեղ բանջարեղեն կամ գետնախնձոր պահել, ձմեռվա համար:

Ես մտածեցի, որ սա էլ է քիչ հավանական: Կես ժամ հետո արդեն ձանձրացա Կոստասին նայելուց, և Ռոջերի հետ գնացիք զբոսնելու:

Բայց հաջորդ օրը բամբուկե տնակի կմախքն արդեն պատրաստ էր: Կոստասն հիմա այն ծածկում էր եղեգնով, որ պատերը ու տանիքը ամուր ու խիտ լինեն: Եվս մի օր, և կառույցն արդեն պատրաստ էր: Այն շատ նման էր Ռոբինզոն Կրուզոյի խրճիթին: Երբ ես մորս հարցրի, թե նրա ինչին է պետք այս տնակը, նա պատասխանեց, թե դեռևս չգիտե, բայց ինչոր բանի համար պետք կգա: Այսպիսի անորոշ տեղեկությամբ ես ստիպված եղա բավարարվել:

Իմ ծննդյան օրվա նախօրյակին բոլորն իրենց պահում էին շատ տարօրինակ ձևով: Լարրին, օրինակ, քայլում էր և ամբողջ տնով մեկ բացականչում էր «ատո՛ւ», «ապո՛րս» և որսորդական այլ բառեր: Քանի որ նման բաներ նրա հետ պատահում էին բավական հաճախ, ես դրանց առանցին նշանակություն չէի տալիս:

Մարգոն խորհրդավոր կերպով դեսուդեն էր ընկնում տան մեջ՝ ինչոր փաթեթներ թնի տակ: Մի անգամ ես նրա հետ քիթքթի բախվեցի նախասենյակում և զարմանքով նկատեցի, որ նա ձեռքում պահել է ծննդյան տոներից մնացած գույնզգույն զարդարանքները: Տեսնելով ինձ, Մարգոն վախեցած բացականչեց և, բռնված հանցագործի նման, նետվեց իր ննջարանը, իսկ ես ապշելուց միայն բերանս բացեցի:

Նույնիսկ Լեալին ու Սպիրոն իրենց նման չէին: Նրանք շարունակ գնում էին պարտեզ գաղտնի խորհրդակցության: Նախադասությունների այն բեկորներից, որ հաջողվում էր լսել, ես չէի կարողանում հասկանալ, թե ինչ են նրանք անում:

— Հետևի նստատեղին, — մոթմոթալով ասում էր Սպիրին: — Ազնիվ խոսք, վարպետ Լեալի, ես արդեն այդպես արել եմ:

Այստեղ Լեալին տեսավ, որ ես առանց ամաչելու ականջ եմ դնում իրենց, և կոպիտ հարցրեց, թե սատանան տանի, ինչպես եմ ինձ թույլ տալիս լսել ուրիշի խոսակցությունը: Ավելի լավ կլիներ գնայիր ծով ու այնտեղ ժայռից թռչեիր: Չգալով, որ տանը բոլորն էլ վատ են տրամադրված, ես ու Ռոջերը գնացիք ձիթենու պուրակը: Եվ մինչև օրվա վերջը ապարդյուն հետապնդում էինք կանաչ մոդեսներին:

Իսկ երեկոյան, երբ նոր էի լամպը հանգցրել ու անկողին մտել, ձիթենու պուրակից հանկարծ լսվեցին խռպոտ երգի ձայներ և ծիծաղի պոռթկումներ: Որոշ ժամանակ անց ես կարողացա տարբերել Լեւիի, Լարրիի և Սպիրոյի ձայները: Նրանք բոլորն էլ, թվում էր, երգում էին տարբեր երգեր: Երևի ինչոր տեղ էին գնացել և մի լավ ուրախացել էին այնտեղ, մտածեցի ես: Նախասենյակում լսվող զայրացկոտ շշուկներից ու ոտքերի քստքստոցից եզրակացրի, որ Մարգոն ու մայրս էլ են նույն կարծիքին:

Շարունակելով բարձր քրքջալ Լարրիի ինչոր սրախոսության վրա, խումբը ներխուժեց տուն, որտեղ Մարգոն ու մայրիկս նրանց դիմավորեցին զայրացկոտ շշուկով:

— Կամաց, — ասաց մայրիկս: — Դուք կարթնացնեք Ջերրիին: Պատմեք, ի՞նչ էք խմել:

— Գինի, — վեհաշուք արտասանեց Լարրիին ու զկոտաց:

— Գինի, — կրկնեց Լեւին, — իսկ հետո մենք պարեցինք: Սպիրոն պարեց, ես էլ պարեցի, և Լարրին պարեց, և հետո ես պարեցի:

— Ավելի լավ է պառկեք, — ասաց մայրիկս: — Ի սեր աստծո, գնա քնելու: Գիտեք ինչ, Սպիրո, իմ կարծիքով չպետք է նրանց թույլ տայիք այդքան խմել:

— Սպիրոն պարում էր, — ասաց Լեւին և այս անգամ՝ տեղին:

— Ես նրան կպառկեցնեմ, — առաջարկեց Լարրին: — Միայն ես եմ լուրջ:

Ինձ հասան նրանց երերուն ոտնաձայները հատակի վրա, երբ նրանք իրար գրկելով, դուրս եկան միջանցքից:

— Հիմա ես պարում եմ քեզ հետ, — լսվեց Լեւիի ձայնը, որին Լարրին քարշ տվեց ննջասենյակ և նստեցրեց մահճակալին:

— Դուք ինձ ներեցեք, միսսիս Դարրել, — խոսեց Սպիրոն զինուց խզված ձայնով: — Ես չկարողացա նրանց կանգնեցնել:

— Դուք նրան բերի՞ք, — հարցրեց Մարգոն:

— Այո, միսսի Մարգո, մի անհանգստացեք, — պատասխանեց Սպիրոն, — նա այնտեղ է, Կոստասի մոտ:

Վերջապես Սպիրոն գնաց, նրանցից հետո քնելու գնացին մայրիկս ու Մարգոն: այդպես անհասկանալի ավարտվեց առանց այն էլ անսովոր այդ օրը: Բայց շուտով ես

մոռացա հարազատներին տարօրինակ վարքագիծը և, մտածելով սպասող նվերների մասին, խորասուզվեցի քնի մեջ:

Հաջորդ առավոտ զարթնելով, ես որոշ ժամանակ պառկել ու մտածում էի, թե ի՞նչ առանձնահատուկ բան է տեղի ունեցել այսօր: Հետո հիշեցի: Այսօր իմ ծննդյան օրն է, երբ բոլոր մարդիկ ինձ նվերներ պիտի բերեն, իսկ հարազատներս պետք է կատարեն իմ բոլոր խելացի խնդրանքները:

Արդեն պատրաստվում էի վեր կենալ անկողնուց և տեսնել, թե ինչ նվերներ են պատրաստել ինձ համար, երբ նախասենյակում իրարանցում բարձրացավ:

— Բռնեք նրա գլխից: Գլխի՛ց, — լսվեց Լեւիի ձայնը:

— Զգո՛ւյշ: Զարդարանքը կփչացնեք, — խրատում էր Մարգոն:

— Մատանան տանի քո այդ հիմար զարդարանքները, — ասաց Լեւին:

— Բռնեցեք դրա գլուխը:

— Կամաց, կամաց, սիրելիներս, — հանգստացնում էր նրանց մայրիկը: — Մի կովեք:

— Տե՛ր աստվա՛ծ, — վրդովվեց Լարրին, — չորս կողմը թրիք է:

Այս ամբողջ առեղծվածային խոսակցությունը ուղեկցվում էր տարօրինակ թխկթխկոցներով, ասես նախասենյակի կաֆելապատ հատակին թռչում էին պինգպոնգի գնդակները: Ինչ են այնտեղ անում, — մտածում էի ես: Մովորաբար այս ժամերին բոլորը դեռ աչքերն են տրորում և, տեղից չվերկացած, խենթի պես խմում են մի բաժակ թեյ: Ես պատրաստվեցի գնալ նախասենյակ և մասնակցել ընդհանուր ուրախությանը, երբ հանկարծ դուռը բացվեց և, ցատկոտելով, իմ ննջարանը խուժեց գունավոր պսակներով զարդարված իշուկը: Նրա գլխին, ականջների արանքից դուրս էին ցցվել հմտորեն ամրացված երեք հսկայական փետուր: Լեւին ուժով քաշում էր իշուկի պոչից ու բղավում.

— Չո՛շ, զգվանք:

— Լեզուդ, սիրելիս, — մորմոքվեց դռների մոտ կանգնած մայրիկս:

— Դու կփչացնե՛ս, զարդարանքները, — բղավում էր Մարգոն:

— Որքան շուտ այս անասունն այստեղից հեռանա, — ասաց Լարրին, — այնքան լավ: Ամբողջ միջանցքը թրիք է:

— Այդ դու նրան վախեցրիր, — հայտարարեց Մարգոն:

— Ես ոչինչ չեմ արել, — գայրացավ Լարրին, — ես նրան միայն մի քիչ հրեցի:

Իշուկը կանգ առավ մահճակալիս մոտ և նայեց ինձ իր մեծ, շագանակագույն աչքերով: Նա շժմած տեսք ուներ: Հետո այնպես թափ տվեց իրեն, որ ականջների արանքում գտնվող փետուրները թեքվեցին մի կողմ, և հաջողացրեց ետևի ոտքով աքացի տալ Լեւիի սրունքին:

— Տե՛ր աստված, — աղաղակեց Լեւիին, ցատկելով մի ոտքի վրա, — ոտքս կոտրեց այդ կեղտը:

— Լեւի, սիրելիս, — ասաց մայրիկս: — Ինչու ես այդպես խիստ հայհոյում: Մի՛ մոռացիր Ջերրիին:

— Որքան շուտ տանեք այստեղից իշուկին, այնքան լավ, — ասաց Լարրին, — թե չէ այստեղից գոմաղբի հոտ կգա:

— Դուք փչացրիք զարդարանքները, — բողոքում էր Մարգոն, — ախր ես շատ էի չարչարվել:

Բայց ես արդեն ոչ ոքի վրա ուշադրություն չէի դարձնում: Իշուկն ավելի մոտեցավ իմ մահճակալին: Մի պահ նայեց ինձ զննող աչքերով, իսկ հետո արձակելով կոկորդային ուրախ ճիչ, իրեն պարզած ափերիս մեջ խրեց մոխրագույն դնչիկը՝ փափուկ ու նուրբ, ինչպես շերամի որդի կոկոնը, շան նորածին ձագը, ծովաքարը, կամ թավշի պես փափուկ անտառային գորտը: Լեւիին այդ ընթացքում հանել էր անդրավարտիքը և նայում էր ոտքի վերքը, թափելով անեծքների շարան:

— Նա քեզ դո՞ւր է գալիս, սիրելիս, — հարցրեց մայրիկս:

— Արդյոք ինձ դո՞ւր է գալիս նա... Ախր ես ուղղակի պապանձվել էի հիացմունքից:

Իշուկը մուգ կարմիր գույնի էր, գրեթե մանուշակագույն, ուներ կալայի ծաղկի նման մեծ ականջներ, սմբակներից վեր ասես սպիտակ գուլպա էր հագել: Նրա մեջքի երկայնքով ձգվում էր մի սև խաչ, այն հպարտ նշանը, որ վկայում էր, թե նրա ցեղը Քրիստոսին տարել է Երուսաղեմ (և այդ ժամանակից ի վեր շարունակում է մնալ ամենաանհիծված ընտանի կենդանին), իսկ խոշոր փայլուն աչքերը երիզված էին հստակ սպիտակ շրջանակներով, իբրև նշան այն բանի, որ ծագումով Գաստուրի գյուղից է:

— Հիշո՞ւմ ես, Կատերինայի իշուկին, — հարցրեց Մարգոն, — նա քեզ շատ էր դուր եկել: Մա էլ նրա դուստրն է:

Այդ հաղորդումը, իհարկե, իշուկին ավելի սիրելի դարձրեց: Իսկ նա, զարդարված ինչպես կրկեսում, կանգնել ու կենտրոնացած ծամում էր մի կտոր ոսկեզօծ թել: Ես արագ հագնվեցի ու շնչակտուր հարցրի մորս, թե որտեղ պիտի պահեմ իշուկիս: Իհարկե, նրան տանը պահել չի կարելի: Լարրին արդեն հասցրեց մայրիկին ասել, որ ցանկության դեպքում նա կարող է նախասենյակում աճեցնել կարտոֆիլի լավ բերք:

— Դրա համար էլ հենց Կոստասը կառուցեց այն տնակը, — ասաց մայրիկս:

Ուրախությունից ինձ կորցրել էի: Ա՛յ, թե ինչ ազնվասիրտ, բարի, լավ հարազատներ ունեմ ես: Ինչպիսի հմտությամբ էին նրանք ամեն ինչ թաքցնում ինձանից, որքան են չարչարվել, որ այդպես զարդարեն իշուկին: Դանդաղ ու խնամքով, ասես նա փխրուն հախճապակուց էր, ես իմ իշուկին տարա պարտեզի միջով ձիթենու պուրակը, բացեցի բամբուկե գոմի դուռը և ներս թողեցի նրան: Ես ցանկանում էի հաշվել գոմի չափերը, չէ որ Կոստասին կարգին շինարար չէի համարում: Գոմը հոյակապ էր, իսկ և իսկ իշուկին հարմար: Ես նորից նրան դուրս բերեցի, երկար թոկով կապեցի ծառից և կես ժամ կանգնեցի հմայվածի պես, դիտելով իշուկին չորս կողմից, մինչև նա խաղաղ արածում էր: Վերջապես լսեցի, որ մայրիկը կանչում է նախաձաշի, և երանությամբ շունչ քաշեցի: Իհարկե, մտածեցի ես, առանց կասկածի և ամենափոքր չափազանցության կարելի է ասել, որ այս իշուկը ամենահիանալի իշուկն է ամբողջ Կորֆու կղզում: Եվ, չգիտեմ ինչու, վճռեցի նրա անունը դնել Սալլի: Հետո արագ համբուրեցի նրա մետաքսե դնչիկը և վազեցի նախաձաշելու:

Գաճաճ ջունգլիներ

Գարնանային տաք օր էր, և ես անհամբեր սպասում էի Թեոդորի ժամանմանը: Մենք մտադիր էինք նրա հետ զբոսնելու գնալ տանից երկուերեք մղոն հեռու գտնվող մի փոքրիկ լճակի կողմերը, որը մեր սիրած վայրերից մեկն էր: Թեոդորի հետ անցկացրած այդ օրերը, այդ «էքսկուրսիաները», ինչպես նա անվանում էր, ինձ համար բացառիկ նշանակություն ունեին, բայց Թեոդորին պետք է որ հոգնեցնեին, որովհետև նրա երևալու առաջին իսկ րոպեից մինչև մեկնելու պահը ես անընդհատ հարցեր էի թափում նրա վրա:

Վերջապես Թեոդորի կառքը, թխկթխկալով ու զրնգալով, մոտեցավ մեր տանը, և Թեոդորը դուրս եկավ այնտեղից, ինչպես միշտ հագնված մեր արշավի համար ամենաանհամապատասխան ձևով՝ տվիդից շքեղ կոստյում, թանկարժեք, փայլելու աստիճան մաքրած կոշիկներ և ֆետրե մոխրագույն գլխարկ, որ դրել էր ուղիղ ու խնամքով: Քաղաքային այս շքեղ հագուստի մեջ կար միայն մի անհամապատասխանություն. ուսից զցած պայուսակը լեփլեցուն էր

փորձանոթներով ու սրվակներով, ձեռնափայտին ամրացված էր փոքրիկ շշով ցանցորսիչ:

— Հը՛մ, — արտասանեց նա լուրջ տեսքով, սեղմելով ձեռքս, — բարև, բարև: Ես տեսնում եմ. . . հըմ: Հիանալի օր է այսօր մեր էքսկուրսիայի համար:

Տարվա այս եղանակին հիանալի օրերը տևում էին մի քանի շաբաթ և ամեննին էլ արտառոց բան չէին, սակայն Թեոդորը դա ընդգծում էր ամեն անգամ, կարծես դրա մեջ տեսնում էր աստծու շնորհած հատուկ ողորմածություն:

Մենք, ժամանակ չկորցնելով, վերցրինք մայրիկիս պատրաստած պայուսակը՝ ուտելիքով ու իմբիրի գարեջրով լի կավե շշերով, և գցեցինք ուսներիս իմ հանդերձանքի հետ, որն ավելի մեծ էր, քան Թեոդորինը, քանի որ ինձ ձեռ էր տալիս ամեն տեսակ որսը և անհրաժեշտ էր պատրաստ լինել ըստ ամենայնի:

Եվ ահա մենք Ռոջերի հետ միասին, անցնում ենք արևով ողողված պուրակների շերտավոր ստվերների միջով, իսկ մեր առջև ողջ կղզին է՝ գարնանային իր թարմությամբ ու բերկրանքով: Տարվա այդ ժամանակ ձիթենու պուրակները դեռևս պատված են ծաղիկներով: Կարմրաերանգ, գունատ հողմածաղիկները, որոնց թերթիկները ասես գինով էին թրջված: Վարդագույն շաքարաշերտի նման խոլորձներ և դեղին զաֆրաններ, այնքան հյութեղ ու փայլուն ու այնքան նման մոմի, որ թվում էր, թե մոմերի նման կվառվեն, եթե դրանց առեջքներին լուցկի մոտեցնենք: Մոտ մի մղոն մենք անցանք ճանապարհով, որի երկու կողմերում ձգվում էին հինավուրց, սլացիկ նոճիներ. դրանք ծածկված էին սպիտակ փոշու խիտ շերտով և նմանվում էին կրաջրի մեջ գցած ներկարարական վրձնի: Հետո թեքվեցինք ուրիշ կողմ և ուղղվեցինք դեպի ոչ բարձր սարի կատարը: Այստեղ մեր առջև բացվեց մոտ չորս ակր տարածությամբ մի լիճ, որի ափերին աճում էին եղեգներ, և ջուրը կանաչ էր ջրաբույսերից:

Այդ օրը լիճ տանող ճանապարհին ես մի քիչ առաջ էի անցել Թեոդորից և հանկարծ կանգ առա քարացած, ապշած նայելով իմ առջև ընկած արահետին: Այս արահետի երկարությամբ ձգվում էր մի փոքրիկ գետակի հունը, որ գնում էր դեպի լիճը: Գետակն այնքան փոքր էր, որ նույնիսկ գարնանային արևը կարողացել էր չորացնել գրեթե ամբողջովին, նրա հատակին մնացել էին միայն ջրի բարակ շիթեր: Գետակի լայնությամբ, այնուհետև բարձրանալով արահետի վրա և նորից իջնելով գետի մեջ, ընկած էր, ինչպես ինձ թվաց, մի հաստ ճոպան, որը ասես կենդանի լիներ: Մոտենալով, ես տեսա, որ ճոպանը կազմված է ինչոր փոքրիկ, փոշեծածկ բազմաթիվ օձիկներից: Իսկույն ձայն տվի Թեոդորին, ու երբ նա մոտեցավ, ցույց տվեցի այդ հրաշքը:

— Ա՛՛, — ասաց Թեոդորը, և նրա աչքերում վառվեց հետաքրքրությունը: — Հըմ, այո: Շատ հետաքրքիր է: Elver:

Ես հարցրեցի, թե որ օձերին են պատկանում այդ elverը և ինչո՞ւ են նրանք շարժվում բոլորը միասին:

— Ոչ, ոչ, — ասաց Թեոդորը: — Դրանք օձ չեն, դրանք փոքրիկ օձաձկներ են, և, թվում է, դրանք . . . հըմ, հասկանո՞ւմ ես . . . շարժվում են դեպի լիճը:

Ես հիացած կռացա այդ փոքրիկ օձաձկների գաղութի վրա, որոնք վճռականորեն իրենց համար ճանապարհ են բացում քարերի ու խոտերի, ծակծկող ուղտափշերի միջով: Նրանց մաշկը չոր էր ու փոշոտ: Երևի նրանց թիվը հասնում էր միլիոնների: Ո՞վ կարող էր մտածել, որ այս փոշոտ, չոր տեղում կարելի է հանդիպել կենդանի օձաձկների:

— Օձաձկների ամբողջ պատմությունը . . . հըմ . . . — ասաց Թեոդորը, ցած դնելով պայուսակը և ավելի հարմար տեղավորվելով քարի վրա, — շատ հետաքրքիր է: Գիտե՞ս արդյոք, որ որոշակի ժամանակաշրջանում չափահաս օձաձկները լքում են իրենց լճերը ու գետերը, ուր իրենք ապրել են, և . . . ճանապարհվում են դեպի ծով: Դա տեղի է ունենում բոլոր եվրոպական օձաձկների և բոլոր հյուսիսամերիկյան օձաձկների հետ: Թե ո՞ւր են գնում նրանք բոլորը, երկար ժամանակ մնում էր անտեղծված: Գիտնականները գիտեին միայն, որ նրանք երբեք ետ չեն վերադառնում, և որ ինչոր ժամանակ հետո հայտնվում են երիտասարդ օձաձկներ և բնակեցնում այդ նույն գետերն ու ջրամբարները: Միայն բավական ուշ մարդիկ իմացան, թե ինչ է տեղի ունենում իրականում:

Թեոդորը մտածկոտ շոյեց մորուքն ու շարունակեց.

— Բոլոր օձաձկները ճանապարհ են ընկնում դեպի ծով: Միջերկրական ծովով նրանք ընկնում են Ատլանտյան օվկիանոս և լողում են դեպի այն տեղը, որը կոչվում է Սարգասյան ծով . այն գտնվում է, ինչպես դու գիտես, Հարավային Ամերիկայի ափերի մոտ: Հյուսիսային Ամերիկայի . . . հըմ . . . օձաձկներն, իհարկե, ստիպված չեն լինում այդքան լողալ: Բայց նրանք էլ են գնում այդ նույն տեղը: Այնտեղ նրանք ձկնկիթ են դնում ու ոչնչանում: Օձաձկան թրթուրը, երբ նա դուրս է գալիս ձվիկից, միանգամայն արտասովոր տեսք ունի . . . Հըմ, գիտե՞ս . . . նա թափանցիկ է և ունի տերևի ձև: Այս թրթուրներն այնքան նման չեն հասուն օձաձկներին, որ երկար ժամանակ նրանց դասում էին հատուկ ցեղախմբում: Այսպես, ուրեմն, թրթուրները դանդաղ լողում են դեպի ետ, դեպի այն տեղերը, որտեղից եկել են իրենց ծնողները: Այդ ընթացքում, երբ հասնում են Միջերկրական ծովին, կամ էլ Հյուսիսային Ամերիկայի ափերին, նրանք այնպիսի տեսք են ունենում, ինչպես՝ սրանք:

Թեոդորը կանգ առավ, նորից շոշափեց մորուքը և ձեռնափայտի ծայրը դանդաղ խրեց օձաձկների կենդանի զանգվածի մեջ այնպես, որ նրանք զայրացած շարժվեցին:

— Երևում է, նրանց մոտ . . . ը . . . հըմ, շատ ուժեղ է հայրենի տան բնագոյր, — շարունակեց Թեոդորը: — Չէ՞ որ այստեղից մինչև ծովը ոչ պակաս երկու մղոն է, սակայն այս բոլոր փոքրիկ օձաձկները հայտնվեցին այստեղ, իրենց համար ճանապարհ բացելով դեպի հենց այն լիճը, ուր ապրել են նրանց ծնողները:

Թեոդորն ուշադիր նայեց չորս կողմը և ինչոր բան ցույց տվեց ինձ ձեռնափայտով:

— Այս ճանապարհորդությունը բավականին վտանգավոր է, — նկատեց նա, և ես հասկացա, թե ինչը նկատի ունի: Օձաձկների շերտի հենց գլխավերևում, երկնքում, սև խաչի նման թռչում էր ձկնորս բազեն: Մենք տեսանք, թե ինչպես նա քարի նման ընկավ ցած և հետո, ամուր սեղմելով ճիրանների արանքում օձաձկների կույտը, թռավ մի կողմ:

Մենք քայլում էինք օձաձկների շերտի երկայնքով (նրանք գնում էին նույն ճանապարհով, ինչ և մենք) և տեսնում էինք, թե ինչպես են գործում մյուս գիշատիչները: Մեր մոտենալուն պես օդ էին բարձրանում արջնագռավները, կաչաղակների երամները, աչքի ծայրով կարողացանք տեսնել, ինչպես առկայծեց ու մրտենու թփերի մեջ անհետացավ աղվեսի բոցեղեն պոչը:

Հասնելով լճին, մենք սովորաբար գործում էինք արդեն ընդունված կարգով: Ամենից առաջ որոշում էինք, թե ո՞ր ձիթենու տակ դնենք ուտելիքն ու հանդերձանքը, նրանցից որը կեսօրին կտա ամենախիտ ստվերը: Ընտրելով ծառը, նրա տակ դարսում էինք մեր իրերը և հետո ցանցորսիչներով ու պայուսակներով գնում էինք դեպի լիճն ու աշխատում ամբողջ առավոտ: Դանդաղ, կենտրոնացված տեսքով, ինչպես ձուկ բռնող ձկնկույլներ, քայլում էինք ջրի միջով և ցանցորսիչը մտցնում խճճված ջրաբույսերի արանքը: Այստեղ Թեոդորն իրեն գերազանցում էր: Շուրջը զրնգուն նետերի պես թռչում էին մեծ ու կարմիր ճպուռները, իսկ նա կանգնում էր ջրի մեջ ու խորքերից այնպիսի հրաշքներ հանում, որոնց կնախանձեր ինքը կախարդ Մերլինը:

Այստեղ, այս խաղաղ ոսկեգօծ ջրերում, տարածվում էին գաճաճ ջունգլիները: Լճի հատակում անցած տարվանից մնացած տերևների միջև վխտում էին վագրի պես սարսափելի ու խարդախ գիշատիչներ՝ ճպուռների թրթուրները: Ծանծաղ տեղերում, ինչպես հաստ բեզեմոտների հոտը աֆրիկյան գետի մեջ, վխտում էին հաստ ու փայլուն, սև շերեփուկները: Ստորջրյա կանաչ թավուտներում անհանգիստ ճախրում էին բազմագույն միկրոսկոպիկ արարածներ, որոնք հիշեցնում էին էկզոտիկ թռչունների երամ. իսկ ներքևում, արմատների մոտ, այս անտառի խավար խորքերում գալարվում էին հավերժ քաղցած տզրուկներն ու տրիտոնները: Իսկ այնտեղ, ուր թափանցում էր արևը, փափուկսև ցեխի ալիքաձև բլուրների մեջ, բեկորներից ու ճյուղերից կազմված իրենց թավամազ մուշտակներով սողում էին թրթուրները, նմանվելով քնից նոր արթնացած արջերի:

— Այ, սա արդեն բավական հետաքրքիր է, տեսնում ես . . . հըմ . . . այն որդին: Այսպես, սա հրաթիթեռի թրթուրն է: Դու ի միջի այլոց, վատ չես անի, որ նրան վերցնես քո հավաքածուի համար: Հրաթիթեռը հետաքրքիր է նրանով, որ մեկն է ոչ բազմաթիվ այն թիթեռնիկներից, որոնց թրթուրը աճում է ջրի տակ: Նա ապրում է այնտեղ այնքան ժամանակ, մինչև որ վրա է հասնում այն ժամանակը . . . հըմ . . . երբ նա վեր է ածվում հարսնյակի: Հետաքրքիր է, որ այս տեսակի մոտ գոյություն ունեն . . . ը . . . հըմ . . . երկու ձևի կանացի առանձնյակներ: Արուի թևերը, իհարկե, լիովին զարգացած են, նա թռչում է, հենց որ դուրս է գալիս: Էգերից մեկն էլ է թռչում, բայց մյուսը, երբ դուրս է գալիս հարսնյակային շրջանից, հըմ . . . թևեր չի ունենում, նա շարունակում է ապրել ջրի տակ և լողում է ոտքերի օգնությամբ:

Թեոդորը մի քիչ առաջ գնաց ավի երկայնքով, որը ծածկված էր գարնանային արևից արդեն չորացած ու ճաքճաք ցեխով: Ուռենու ճյուղից կապույտ հրավառության պես վեր թռավ ալկիոնը, իսկ լճի կենտրոնում իջավ և իր մանգաղանման թևիկներով նազանքով սահեց ծովածիճառը: Թեոդորը ցանցորսիչն ընկղմեց ջրի մեջ և դանդաղ շարժվեց մի կողմից մյուսը, ասես կատու էր շոյում: Հետո այն դուրս հանեց, որպեսզի ամենամանրագին քննության ենթարկի ծայրից կախված սրվակը:

— Հըմ, այո, — ասաց նա, — նայելով սրվակին խոշորացույցով: — Մի քանի կիկլոպներ: Մոծակի երկու թրթուր: Այ, սա հետաքրքիր է: Տեսնում ես, այ առվակաթիթեռի թրթուրը, որն իր պատյանը կառուցել է ամբողջապես փոքրիկ խխունջների խցիկներից: Դա . . . գիտես, շատ գեղեցիկ է: Իսկ այ այնտեղ մենք, ես կարծում եմ . . . այո՛, այո՛, մի քանի անվակիր որդեր ունենք:

Հուսահատորեն ձգտելով ետ չմնալ տեղեկությունների այդ անընդհատ հոսանքից, ես հարցրի, թե ինչ բան է անվակիր որդը, և խոշորացույցով սկսեցի դիտել սրվակը, ուր թռչկոտում ու ցատկոտում էին ջրային այս բնակիչները:

— Սկզբում բնագետները նրանց անվանում էին անվակներ, — ասաց Թեոդորը, — այ այս հետաքրքիր վերջույթների պատճառով, որոնք նրանք այդպես արտատոց թափահարում են և նմանվում են . . . հըմ . . . ը . . . ը . . . ժամացույցի անիվներին: Երբ մյուս անգամ ինձ մոտ գաս, ես դրանց ցույց կտամ քեզ մանրադիտակով: Դրանք բացառիկ գեղեցիկ արարածներ են: Եվ բոլորն, իհարկե, էգ են:

Ես հարցրի, թե ինչու նրանք պետք է անպայման էգ լինեն:

Դա անվակիր որդերի ամենահետաքրքիր առանձնահատկություններից մեկ է: Էգերը չբեղմնավորվող ձվիկներ են դնում: Հըմ . . . ը . . . ը . . . դե, ինչպես հավերի մոտ լինում են լակ ձվեր: Միայն թե անվակրի ձվերից դուրս են գալիս ուրիշ էգեր, որոնք իրենց հերթին ընդունակ են ձու դնելու, և դրանից . . . հըմ . . . նորից դուրս են գալիս էգեր: Բայց որոշակի շրջանում էգերը դնում են ավելի փոքր ձվեր, որոնցից դուրս են

գալիս արուններ: Այ, երբ ես քեզ ցույց կտամ մանրադիտակով, դու կտեսնես, որ էզը, ինչպե՞ս ասես քեզ . . . շատ բարդ մարմին ունի, մարսողական տրակտ և այլն . . . Արուն ոչինչ չունի: Դա միայն . . . ը . . . ը . . . սաղմով լի լողացող պարկ է:

Ես շշմեցի անվակրի անձնական կյանքի բարդությունից:

— Նրանք հետաքրքիր են նաև նրանով, — շարունակեց Թեոդորը, ուրախությամբ հաղորդելով մի հրաշքը մյուսի հետևից, — որ որոշակի ժամանակաընթացքում . . . ը . . . ը . . . եթե շոգ ամառ է լինում կամ ինչոր բան է տեղի ունենում, որից լիճը կարող է չորանալ, նրանք իջնում են ջրի հատակը ու ծածկվում են շատ կարծր թաղանթով: Սա յուրատեսակ կենսադադար է, քանի որ լիճը կարող է մնալ բոլորովին չոր . . . ըր . . . ասենք, յոթ կամ ութ տարի, և նրանք այդպես էլ կարող են մնալ փոշու մեջ: Բայց առաջին իսկ անձրևից, երբ լիճը լցվում է ջրով, նրանք նորից կենդանանում են:

Մենք նրա հետ գնացինք առաջ և նորից ջուրն իջեցրինք ցանցորսիչները՝ գորտի ձվերի գնդաձև կույտերի և դողոշների ձվերի ձգված մանյակների մեջ:

— Ապա մի նայիր, այ . . . ը . . . ը . . . Մի բոպե վերցրու խոշորացույցը ու նայիր . . . Շատ գեղեցիկ հիդրա է:

Խոշորացույցի տակ շարժվում էր ջրիմուռի մի փոքրիկ կտոր, որին կպած էր երկար, բարակ, սրճագույն մի սյունակ, ծայրին մի փունջ նուրբ շոշափուկներ: Այդ ժամանակ ինչոր տեղից հայտնվեց մի կլոր, լուրջ կիկլոպ և կտրուկ ուսույուններով մոտ թռավ հիդրայի գալարվող շոշափուկներին: Նա մի վայրկյանում կուլ գնաց, կարողանալով միայն երկու անգամ ցնցվել մեռնելուց առաջ: Ես գիտեի, որ եթե շարունակեմ էլի նայել, կկարողանամ տեսնել, թե ինչպես է աստիճանաբար կիկլոպը կուլ գնում հիդրայի ընդերքում:

Շուտով մենք արևով որոշեցինք, որ ուտելու ժամանակն է, և վերադարձանք ձիթենու ծառի մոտ: Բացեցինք մեր պաշարները, հանեցինք իմբիրի գարեջուրը և սկսեցինք կերուխումը՝ հենց նոր հայտնված գարնանային ճպուռների քնկոտ երգի և օղակաձև տատրակների անհեթեթ դունդունոցի տակ:

— Հունարեն, — ասաց Թեոդորը, անշտապ ծամելով հացն ու պանիրը, — օղակաձև տատրակը կոչվում է dekaoc-tura, այսինքն տասնութ ռուբլի: Կա մի առասպել, որ երբ Քրիստոսը . . . հըմ, խաչը տանում է Գողգոթա, մի հռոմեացի զինվոր, նկատելով, թե ինչպես է նա տանջվում, խղճաց նրան, և հենց այդտեղ, Ճամփի վրա, մի պառավ կին վաճառում էր . . . հըմ . . . կաթ: Ջինվորը նրան հարցրեց, թե ինչ արժե մի գավաթ կաթը: Պառավը պատասխանեց, որ տասնութ ռուբլի: Ջինվորի մոտ ընդամենը տասնյոթը կար: Նա ը . . . ը . . . հասկանում ես . . . պառավին խնդրեց, որ մի գավաթ կաթը իրեն վաճառի տասնյոթ ռուբլով Քրիստոսի համար, բայց ժլատ կինը

տասնութ էր պահանջում: Եվ ահա, երբ Քրիստոսին խաչեցին, պառավը դարձավ օղակաձև տատրակ: Մինչև իր կյանքի վերջը նրան վիճակված էր օղակաձև պտտվել շուրջը և կրկնել dekaocto, dekaocto — տասնութ, տասնութ: Եթե նա երբևէ ասի dekaepta՝ տասնյոթ, նորից կվերածվի կնոջ, իսկ եթե կամակորություն անի ասի dekaennaea՝ տասնինը, աշխարհը կկործանվի:

Ձիթենու գով ստվերում մանր սև մրջյունները, որ նման էին ձկնկիթի վճիտ հատիկներին, կողոպտում էին մեր նախաճաշի մնացորդները, իրար հրմշտելով չոր տերևների մեջ, որ դեղնել ու ալ կարմիր էին դարձել անցած ամառվա արևի տակ: Այժմ դրանք շրշում ու խշխշում էին: Լանջն ի վար քշում էին այծերի հոտը: Վհատ գնգում էր առաջնորդ այծի զանգակը և լսվում էր, թե ինչպես են չխկչխկում այծերի ծնոտները, խժռելով ամեն ինչ իրենց ճանապարհին: Առաջնորդը կիպ մոտեցավ մեզ և մի պահ մեզ հատեց իր դեղին աչքերը, արձակելով ուրցի հոտ:

— Դրանց չի կարելի . . . ը . . . ը . . . թողնել առանց հսկողության, — ասաց Թեոդորը, այծին փայտով քշելով: — Նրանք ուղղակի ավերում են գյուղական վայրերը: Ոչ մի բան այդպես չի վնասում:

Առաջնորդը հեզնալից մկկաց ու գնաց, հետևից տանելով իր ավերիչ հրոսակախմբին:

Ուտելուց հետո մենք մի ժամի չափ պառկեցինք ծառի տակ, տերևների արանքից նայելով երկնքով մեկ ցրված սպիտակ ամպի պատառիկներին, որ ասես մանկան թաթիկների հետքեր լինեին, սառած, կապույտ լուսամուտների վրա:

— Լսիր, — վերջապես ասաց Թեոդորը, վեր կենալով գետնից: — Պետք է գնալ լճի մյուս կողմը . . . ը . . . ը . . . նայելու, թե ինչ կա այնտեղ:

Եվ ահա նորից թափառում ենք ափի երկայնքով: Աստիճանաբար մեր փորձանոթները, շշերն ու բանկաները լցվում են ամեն տեսակ միկրոսկոպիկ ֆաունայով, իսկ իմ տուփերը, արկղներն ու տոպրակներն արդեն բերնեբերան լիքն են գորտերով, փոքրիկ կրիաներով ու զանազան բզեզներով:

— Ինձ թվում է, — ասաց Թեոդորը, ափսոսանքով նայելով մայր մտնող արևին, — ինձ թվում է . . . հրմ . . . որ տուն գնալու ժամանակն է:

Մենք դժվարությամբ բարձրացնում ենք շատ ծանրացած պայուսակները, և, զգելով դրանք ուսներին, հոգնած ոտքներս քարշ ենք տալիս դեպի տուն: Առջևում աշխույժ ուսյուններով վազում է Ռոջերը, նրա լեզուն կախ է ընկել վարդագույն դրոշակի պես: Հասնելով տուն և տեղավորելով մեր գերիներին ավելի ընդարձակ բնակարաններում, մենք Թեոդորի հետ հանգստանում ենք, քննարկում օրվա

իրադարձությունները և իրար վրա խմում ենք տաք, առույգացնող թեյը, վերջ տալով մայրիկիս թխած փափուկ, կարմիր բլիթներին:

Մեկ անգամ ես այդ լիճը գնացի առանց Թեոդորի, և այդ անգամ ինձ հաջողվեց միանգամայն պատահաբար բռնել մի ջրային կենդանի, որի հետ վաղուց էի ցանկանում հանդիպել: Դուրս քաշելով ջրից ցանցորսիչը, ես սկսեցի գննել կծիկ դարձած ջրաբույսը և հանկարծ տեսա, որ այնտեղ, կարո ղ եք պատկերացնել, սարդ է թաքնված: Ես հիացած էի: Ես կարդացել էի այդ հետաքրքիր, ըստ երևույթին աշխարհիս ամենաարտառոց սարդի մասին, քանի որ նա վարում է միանգամայն զարմանալի ջրային կյանք: Սարդը կես դյույմի չափ էր և ծածկված էր հազիվ նկատելի արծաթակարմիր ցանով: Հանդիսավորությամբ դրեցի նրան իմ թիթեղյա տուփերից մեկի մեջ և խնամքով բերի տուն: Տանը նրա համար ակվարիում պատրաստեցի, գցեցի այնտեղ ամեն տեսակ ճյուղիկներ ու ջրային բույսեր, նստեցրի սարդին ջրից դուրս ցցված ոստի վրա և սկսեցի ուսումնասիրել: Սարդն անմիջապես ոստի վրայից իջավ ջուրը, ուր իսկույններս պատվեց գեղեցիկ, փայլուն արծաթով, շնորհիվ բազմաթիվ օդաբշտիկների, որոնք կպան նրա մագոտ մարմնին: Հինգ բույս նա վազվեց ջրի տակ, հետագոտելով բոլոր ճյուղերն ու տերևները և, վերջապես, իր համար բնակատեղ ընտրեց:

Այս սարդը ջրասույզ զանգի իսկական գյուտարարն է, և ես, ակվարիումի առջև նստած, դիտում էի, ինչպես է նա այն ստեղծում: Սկզբում սարդը ճյուղերի արանքում ձգեց մի քանի մետաքսի թելեր, որոնք հիմնականում հենք էին ծառայում, հետո նստեց մոտավորապես կենտրոնում և սկսեց հյուսել փափուկ, ոչ ճիշտ ձվաձև ոստայն, շատ թե քիչ սովորական տիպի, միայն բջիջներն ավելի մանր, այնպես որ այն ավելի շուտ հիշեցնում էր նուրբ գործվածք: Այս աշխատանքը նրանից իլեց մոտ երկու ժամ: Դնելով իր տնակի հիմքը, սարդը պետք է մատակարարեր նրան օդի պաշար: Դրա համար նա սկսեց անհամար երթեր կատարել դեպի ջրի մակերեսի օդը: Երբ սարդը վերադառնում էր, ամբողջ մարմինը պատված էր լինում բշտիկներով: Նա շտապում էր ցած, նստում էր ոստայնի տակ և թաթիկներով իր վրայից հանում բշտիկները, որոնք անմիջապես բարձրանում էին վեր ու կանգ առնում ոստայնի տակ:

Հինգերորդ կամ վեցերորդ երթից հետո բոլոր այս մանր բշտիկները միացան մի մեծ բշտիկի մեջ: Որքան սարդը ավելացնում էր օդի բաժինը, բշտիկն ավելի էր մեծանում, սեղմելով ոստայնին, և ահա վերջապես սարդը ստացավ այն, ինչ իրեն հարկավոր էր: Ամուր խարսխված ճյուղիկների ու ջրաբույսերի միջև, ջրում, առաջացավ օդով լցված մի գանգ: Այժմ սա սարդի տունն էր, ուր նա կարող էր ապրել միանգամայն հանգիստ, կարիք չունենալով հաճախ այցելել ջրի մակերես, որովհետև օդը զանգի մեջ, ինչպես ինձ հայտնի էր, ավելանում էր ջրաբույսերից, իսկ սարդի արտազտած ածխաթթվային գազը արտահոսում էր նրա տնակի մետաքսե պատերի միջով:

Ես նայում էի այս զարմանահրաշ արվեստի նմուշին և մտածում . իսկ ինչպե՞ս է կարողացել ամենաառաջին ջրասարդը (որը հենց նոր էր մտադրվել ջրային սարդ դառնալ) ստեղծել այսպիսի հնարամիտ ապրելակերպ ջրի տակ: Բայց այս սարդերը հետաքրքիր են ոչ միայն իրենց ստորջրյա շինարարությամբ: Ի տարբերություն մյուս բոլոր տեսակի սարդերի, ջրասարդի արուն երկու անգամ մեծ է եզից, և բեղմնավորելուց հետո կինը խժռում է ամուսնուն, ինչպես հաճախ պատահում է սարդերի ընտանեկան կյանքում: Իմ սարդի չափերից ես որոշեցի, որ նա էգ է, և նրա փորը, կարծես թե ուռած է: Որոշելով, որ սարդը գտնվում է երջանիկ սպասումի մեջ, ես աշխատում էի նրան ավելի լավ սնունդ տալ: Նա սիրում էր հաստ ու կանաչ դաֆնիներ, որոնց կարողանում էր որսալ անսովոր ճարպկությամբ, երբ նրանք լողում էին մոտիկ: Բայց հավանաբար ամենից շատ նրան դուր էին գալիս նորածին տրիտոնիկները, և, չնայած դա նրա համար շատ խոշոր որս էր, սարդը նրանց վրա նետվում էր առանց տատանման: Այն ամենը, ինչ նրան հաջողվում էր որսալ, սարդը տանում էր իր գանգը և այնտեղ ուտում լողության ու խաղաղության մեջ:

Մի գեղեցիկ օր ես տեսա, որ էգը մեծացնում է իր գանգը . նա աշխատում էր առանց շտապելու, և աշխատանքը երկու օր իլեց: Եվ ահա, առավոտյան նայելով ակվարիումի մեջ, ուրախությամբ տեսա, որ փորձակայանը լցվել է կլոր ձվիկներով: Պահանջվող ժամկետում նրանցից դուրս եկան փոքրիկ սարդեր, որոնք իրենց մոր պատճենն էին:

Այժմ բոլոր շտապարդեր ունեի: Բայց շուտով զայրույթով նկատեցի, որ նրանց մայրը՝ ամբողջովին գուրկ լինելով ծնողական զգացմունքներից, շատ հանգիստ ուտում է իր սեփական սերնդին: Ստիպված եղա փոքրիկներին տանել մի ուրիշ ակվարիում: Սակայն երբ սարդիկները մեծացան, նրանք էլ սկսեցին միմյանց ուտել, այնպես որ վերջ ի վերջո ես ինձ համար թողեցի միայն երկուսին, առավել խելոք ժառանգներին, իսկ մյուսներին տարա լիճ և բաց թողեցի:

Ծովախեցգետիններն ու թանաքաձկները

Ամեն առավոտ, երբ ես արթնանում էի, իմ սենյակն ամբողջապես արևի լույսի ցուլքերի մեջ էր, որ ներս էին թափանցում փակ կրկնափեղկերի արանքից: Շներն արդեն հաջողացրել էին առանց իմ գիտության մտնել մահճակալիս տակ և հիմա, փոված, քնել էին անխռով ու ամուր քնով: Լուսամուտի մոտ նստել էր Ուլիսը և, ծայրահեղ անբավականությամբ, աչքերը կկոցել արևի ոսկեգոծ շողերից: Պատուհանից լսվում էր աքաղաղի խոպոտ հեգնալից կանչը և հավերի մեղմ կչկչոցը (ասես ձավարով շիլա էր բլբլթում գագոջախի վրա), որոնք քուջուջ էին անում կիտրոնի ու նարնջի ծառերի տակ . այծերի գանգակների հեռավոր գնգոցը, ճնճուկների բարձր ճովոդյունը քիվերի վրա և անհանգիստ մի ծվլոց, որ նշանակում

էր, թէ իմ պատուհանի տակի իրենց բույնն են վերադարձել հոգատար ծիծեռնակները և կտուցներով կեր են բերել ձագուկներին: Նետելով սավանը և սենյակի մեջտեղը քշելով շներին, ուր նրանք թափ տվին իրենց, ձգվեցին ու հորանջեցին, տերևի պես պտտելով վառ կարմիր լեզուները, ես մոտեցա պատուհանին ու բացեցի կրկնափեղկերը: Այնուհետև, մինչև այքերս կվարժվեին պայծառ լույսին, ես փովեցի լուսամուտի գոգին, վաղորդյան արևի տակ դնելով մերկ մարմինս, որի վրա երևում էին շների լվերի խայթոցներից առաջացած մանր վարդագույն բծեր, և մտածկոտ սկսեցի քորվել: Դադարելով վերջապես ճակոտալ, ձիթենու արծաթե կատարների վրայով մի հայացք գցեցի ծովին, որ կապույտին էր տալիս մեր տնից կես մղոն հեռավորության վրա: Հենց այստեղ, այս ափին, ժամանակ առ ժամանակ հայտնվում էին ձկնորսներն իրենց ուռկաններով, դա ինձ համար միշտ արտակարգ իրադարձություն էր լինում, քանի որ ցանցերի մեջ հայտնվում էին ծովածոցի կապույտ խորքերից այնպիսի հրաշալի կենդանիներ, որոնց ինքս բռնել չէի կարող:

Ալիքների վրա նկատելով ձկնորսական փոքրիկ մակույկներ, իսկույն հագնվում էի և, վերցնելով անհրաժեշտ կարթը, ձիթենու պուրակների միջով թռչում էի դեպի ծով: Գրեթե բոլոր ձկնորսներին գիտեի անուններով, բայց առանձնապես մտերմացել էի մի բարձրահասակ և ուժեղ, հրաշեկ մազերով տղայի հետ: Նրա անունը Սպիրտ էր՝ ի պատիվ անփոխարինելի սուրբ Սպիրիդոնի, ուստի և որպեսզի նրան տարբերեմ իմ իմացած մյուս բոլոր Սպիրտներից, ես նրան անվանում էին Կոկինո, որ նշանակում է շեկ: Կոկինոն հաճույքով էր կենդանիների նմուշներ բերում ինձ համար, թեև կենդանիներն իրենք նրան ամենևին էլ չէին հետաքրքրում. նրան հաճույք էր պատճառում իմ անկեղծ ուրախությունը:

Մեկ անգամ ծովափ եկա հենց այն ժամանակ, երբ ջրից դուրս էին հանում ուռկանները: Արևախանձ ձկնորսները ձգում էին թաց պարանները, բոբիկ ոտքերով ուժով հենվելով ավազի մեջ, և ավելի ու ավելի էին մոտեցնում ծանր ցանցերը ափին:

— Ողջ եղիր, կիրիե Ջերրի, — բացականչեց ինձ Կոկինոն, թափահարելով խոշոր, պեպենոտ ձեռքերը: Նրա մազերը ասես խարույկ լինեին արևի տակ: — Այսօր մենք քեզ համար հետաքրքիր կենդանիներ կունենանք: Ուռկանը նոր տեղում ենք ջուրը գցել:

Ես նստեցի ավազի վրա ու սկսեցի համբերությամբ սպասել, իսկ ձկնորսները, ուրախ շատախոսելով և կատակելով, շարունակում էին իրենց գործը: Որոշ ժամանակ անց ջրի մեջ երևաց և շուտով մակերես դուրս եկավ ուռկանը: Արդեն երևում էր, թե ինչպես էր ցանցերի մեջ փայլում ու շողշողում ձուկը: Երբ ուռկանը դուրս քաշեցին, այն ամբողջովին ասես կենդանի էր և դողում էր իր մեջ աղմուկով թափոսացող ձկներից: Լսվում էր իրար հարվածող ձկնային պոչերի համաչափ, ընդհատուն ստակատոն:

Ձկնորսները բերեցին զամբյուղները և սկսեցին դրանց մեջ լցնել ուռկանի ձկները: Կարմիր ձուկ, սպիտակ ձուկ, մուգ կարմիր շերտերով ձուկ, սկորպենա, որ նման էր ալ կարմիր գոբելենի: Երբեմն հանդիպում էր ութոտնիկ, կամ թանաքաձուկ, որոնք իրենց մարդկային աչքերով տազնապալի նայում էին ցանցի խորքից: Երբ որսի ամբողջ ուսուցի մասը հաջողությամբ դասավորվեց զամբյուղների մեջ, հասավ և իմ հերթը:

Ցանցերի հատակին միշտ էլ մնում էր քարերի ու ծովային ջրիմուռների կույտ, և հենց այստեղ էլ գտնվում էր իմ ավարը: Մի անգամ ես գտա մի հարթ ու կլոր քար, որի կենտրոնից բարձրանում էր շատ գեղեցիկ ձյունաթույր ճերմակությամբ մարջանային ծառ: Այն ասես դալար կեչի լիներ ձմռանը, ծածկված փափուկ ձյան շերտով: Երբեմն գտնում էի ծովաստղ, որը փափուկ էր բիսկվիտի տորտի պես և գրեթե այդ նույն չափի: Ծովաստղի գույնը բաց շագանակագույն էր, վառ կարմիր կետերով, իսկ եզրերից չէին ձգվում, ինչպես բոլոր աստղերի մոտ, ճառագայթներ, այլ կախված էին կլոր ծոպեր: Մի անգամ ես ջրիմուռի կույտի միջից երկու զարմանալի խեցգետին հանեցի, որոնց ոտքերը և չանչերը, երբ դրանք հավաքում էին, ճիշտ և ճիշտ համընկնում էին օվալաձև գրահի հետ: Նրանց գույնը սպիտակ էր, իսկ մեջքի դեղնակարմիր նախշերը շատ նման էին աբորիգենների դիմակի:

Այս առավոտ Կոկինոն, զամբյուղների մեջ դնելով վերջին ձկներին, մոտեցավ ինձ օգնելու: Ջրիմուռների մեծ կույտի մեջ սովորականի պես կային փոքրիկ կաղամարներ, ծովային ասեղաբյուրեղներ, սարդխեցգետիններ և զանազան ձկնիկներ, որոնք, չնայած իրենց մանր չափերին, չէին կարողացել դուրս պրծնել ցանցի անցքերից: Հանկարծ Կոկինոն «հըմ» արեց զարմանքից, ջրիմուռների խճճված կույտից ինչոր բան դուրս քաշեց և, իր կոշտ ափին դրած՝ մեկնեց ինձ: Ես նայեցի ու աչքերիս չհավատացի, որովհետև դա ծովաձիուկ էր: Կարմրականաչ, շատ բարեկազմ, զարմանալիորեն նման շախմատի ձիուն, նա ընկել էր Կոկինոյի ափի մեջ և ազահորեն կլանում էր օդը իր լայն բացված, խիստ առաջ ցցված բերանով: Նրա պոչը ջղաձգորեն ոլորվում ու բացվում էր: Մի ակնթարթում վերցրի նրան Կոկինոյի ափից ու դրի ջրով լի բանկայի մեջ, մտքումս աղոթելով սուրբ Սպիրիդոնին, որ նա օգնեց ինձ փրկելու ձիուկին: Ի ուրախություն իմ, ձիուկն անմիջապես ուշքի եկավ ու կախվեց բանկայի կենտրոնում, նրա ձիանման գլխի երկու կողմերի լողակները մանրամանր դողում էին, ձուլվելով մի աղոտ բծի մեջ: Համոզվելով, որ ձիուկի վիճակը լավ է, սկսեցի քրքրել ջրիմուռների կույտը ոսկի որոնողի տենդագին հուզմունքով, որը գիտի, որ ավագի մեջ ոսկի է գտնելու: Իմ ջանքերը հատուցվեցին, և արդեն մի քանի րոպե հետո բանկայի մեջ նստել էին տարբեր մեծության վեց ծովաձիուկներ: Այսպիսի հաջողությունից գլուխս կորցրած, ես արագ հրաժեշտ տվի Կոկինոյին և մյուս ձկնորսներին ու սլացա տուն:

Տանը իսկույն ակվարիումից հանեցի այնտեղ ապրող տասնչորս օձամողեսներին և նրանց տեղը հատկացրի իմ նոր սաներին: Ես գիտեի, որ

բանկայում թթվածինը քիչ է, երկար չի բավականացնի ծովաձիուկներին, ուստի եթե չէի ցանկանում, որ նրանք կործանվեն, պետք էր շտապել: Ես վերցրի ակվարիումն ու գնացի ծով: Լվացի ինչպես հարկն է, հատակին ավագ ցանեցի և արագ վերադարձա տուն, և հետո էլի երեք անգամ դուլերով վազեցի ծով, որպեսզի ակվարիումը ջրով լցնեմ: Երբ ես դատարկում էի վերջին դուլը, քրտինքն ինձանից հոսում էր շիթերով, ու ես նույնիսկ մտածում էի, արժե՞ր արդյոք այդքան ջանք թափել ծովաձիուկների համար: Դե, իհարկե, արժեր: Դա ես տեսա իսկույն, հենց որ ծովաձիուկները բանկայից ջրմիացին ակվարիումի մեջ: Նրանք վայրկենապես ուղղվեցին, իսկ հետո ասես ազատ արձակված պոնիների երամակ, սկսեցին պտտվել ձիթենու ճյուղերի շուրջը, որ ես ամրացրել էի ակվարիումի հատակին փոված ավազի մեջ: Նրանց լողակներն այնքան արագ էին շարժվում, որ բոլորովին տեսանելի չէին, թվում էր, թե յուրաքանչյուր ձիուկ շարժվում է ինչոր ներքին շարժիչի օգնությամբ: Աչքի անցկացնելով իրենց նոր տիրությունը, բոլոր ձիուկները հավաքվեցին ձիթենու ճյուղի մոտ, կառչեցին նրանից իրենց պոչերով և լուրջ տեսքով անշարժացան տեղերում:

Ծովաձիուկները իսկույններթ բոլորին դուր եկան: Նրանք գրեթե միակն էին տուն բերած իմ բոլոր կենդանիներից, որ արժանացան ամբողջ ընտանիքի միաձայն հավանությանը: Նույնիսկ Լարրին գաղտնի այցելում էր իմ աշխատասենյակը, որ տեսնի, թե ինչպես են խայտում ձիուկներն իրենց ջրավազանում: Ծովաձիուկներն ինձնից բավական ժամանակ էին խլում: Ջուրը ակվարիումում շատ արագ էր փչանում, և ստիպված էի լինում օրը չորս կամ հինգ անգամ դուլերով վազել ծովափ: Դա բոլորովին էլ հեշտ գործ չէր, բայց ես ուրախ եմ, որ կիսատ չթողի այդ գործը, թե չէ չէի տեսնի մի անսովոր հրաշք:

Ձիուկներից մեկը, որ հավանաբար ծեր էր, քանի որ ամբողջովին սևացել էր, շատ մեծ փոր ուներ: Ես այդ վերագրում էի միայն տարիքին: Բայց ահա մի անգամ առավոտյան աչքս ընկավ նրա փորի վրայի գծին, որն ասես քաշել էին ածելու սայրով: Ես սկսեցի հետևել նրան, ջանալով իմանալ, հո կովտուք չի՞ եղել ձիուկների միջև, իսկ եթե եղել է, ապա ի՞նչ գենք են նրանք օգտագործել (չէ՞ որ արտաքուստ ձիուկները շատ անօգնական էին): Բայց հանկարծ, ի մեծագույն զարմանս իմ, փորի կտրվածքը մի փոքր լայնացավ և այնտեղից դուրս եկավ պստիկ ծովաձիուկ: Ես ուղղակի չհավատացի աչքերիս: Երբ այդ փոքրիկը մի քիչ այն կողմ լողաց ու կախվեց վճիտ ջրում, փորիկից դուրս եկավ մյուսը, հետո էլի ու էլի, և ահա քսան միկրոսկոպիկ ձիուկներ ծիխ ամպի պես պտտվում էին իրենց հսկայական մայրիկի շուրջը: Վախենալով, որ մյուս մեծ ձիուկները կուտեն փոքրիկներին, ես վերցրի մեկ ուրիշ ակվարիում և, ինչպես ինձ թվաց, մայրիկին ու իր ժառանգներին դրեցի այնտեղ: Երկու ակվարիումները ջրով լցնելը շատ դժվար էր, ես սարսափելի հոգնում էի, սակայն ուզում էի դիմանալ մինչև հինգշաբթի, երբ Թեոդորը կգա ու կտեսնի իմ գանձը:

— Հըմ, — ասաց Թեոդորը, պրոֆեսիոնալ հետաքրքրությամբ նայելով ակվարիումի մեջ: — Սա իսկապես հետաքրքրիչ է: Գրականությունից դատելով, ծովաձիուկները, իհարկե, պետք է որ այս տեղերում լինեն, բայց ես, ինքս . . . երբեք այստեղ դրանց չեմ տեսել:

Ես Թեոդորին ցույց տվի մյուս ակվարիումը, ուր լողում էր ծովաձիուկ մայրիկը իր փոքրիկ երամակի հետ:

— Ոչ, — ասաց Թեոդորը: — Սա մայրը չէ, սա հայրն է:

Սկզբում ես մտածեցի, որ Թեոդորը խաղում է հոգուս հետ, բայց նա բացատրեց, թե իրականում բանն ինչնումն է: Երբ էզը ձկնկիր է դնում, և արուն բեղմնավորում է այն, արուն ձկնկիրները հավաքում է իր հատուկ «ճուտահանման» խցիկի մեջ, և նրանք այնտեղ բազմանում են: Նա, ում ես հպարտ մայրիկի տեղ էի ընդունել, իրականում հպարտ հայրիկ դուրս եկավ:

Շուտով ուժերիցս վեր դարձավ ծովաձիուկների ախոռը պահելը, դրանց թարմ ջուր և ուտելիք մատակարարելը: Մեծագույն ավստսանքով ստիպված եղա նրանց ազատել գերությունից:

Կոկինոն ոչ միայն կենդանիներ էր հայթայթում իմ հավաքածուի համար, այլև ցույց տվեց ինձ ձկնորսության ամենազարմանալի եղանակներից մեկը:

Մի անգամ ես հանդիպեցի նրան ծովափին, ուր նա իր խարխուլ նավակի մեջ դնում էր ծովաջրով լիքը նավթամանր: Նավթամանի հատակին պառկած էր մեծ, արտաքուստ բարեհամբույր թանաքածուկը, որը գլխի և ձվաձև մարմնի միացման տեղից կապված էր պարանով: Ես Կոկինոյին հարցրի, թե ո՞ւր է պատրաստվում գնալ: Նա ասաց, որ պատրաստվում է գնալ թանաքածուկ որսալու: Դա ինձ զարմացրեց, որովհետև նավակի մեջ ոչ կարթ, ոչ ցանց և ոչ էլ եռաժանի կար: Ես հարցրի, իսկ ինչպե՞ս է նա մտածում թանաքածուկ որսալ:

— Միրո օգնությամբ, — խորհրդավոր ասաց Կոկինոն: Ես գտնում էի, որ բնախույզի պարտքը ինձ հրամայում է հետազոտել կենդանիներ որսալու բոլոր եղանակները, և իսկույն հարցրի Կոկինոյին, թե չի՞ տանի ինձ իր հետ:

Մենք դուրս եկանք երկնագույն ծովախորշը և կանգ առանք այն տեղերում, ուր խորությունը հասնում էր երկու սաժենի: Այստեղ Կոկինոն դուրս քաշեց պարանի ծայրը, որից կապված էր թանաքածուկը, և այն փաթաթեց իր ոտքի բութ մատին, հետո ձկանը դուրս նետեց նավակից: Թանաքածուկը մի քիչ լողաց ջրի երեսին, նայեց մեզ ասես տարակուսանքով և, ջրի շիթ բաց թողնելով, ուստյուններով լողաց դեպի ծովախորշի խորքը: Պարանը քիչքիչ սահում էր նավակից ցած և շուտով ամուր ձգվեց: Կոկինոն սիգարեթ էր ծխում խոնշտորելով իր բոցեղեն բաշը:

— Հիմա, — ասաց նա ժպտալով, — մենք կտեսնենք, թե ինչ կարող է անել սերը:

Կռանալով թիերի վրա, Կոկինոն սկսեց դանդաղ թիավարել, ժամանակ առ ժամանակ կանգնեցնելով նավակը և լարված ուշադրությամբ հետևելով իր մատի պարանին: Հանկարծ նա թեթև խռոացրեց, դեն նետեց թիերը, այնպես որ նրանք սեղմվեցին նավակողին՝ ինչպես թիթեռնիկի թևեր, և, բռնելով պարանից, սկսեց քաշել դեպի իրեն: Ես կռացա և, աչքերս չորս արած, նայեցի թափանցիկ ջրի միջով, ջանալով տեսնել ամուր ձգված պարանի ծայրը: Կոկինոն սկսեց ավելի արագ քաշել: Որոշ ժամանակ անց ջրի մեջ երևացին ադոտ ուրվագծեր, և շուտով ես նկատեցի թանաքաձկանը: Երբ նա մոտեցավ, ես զարմանքով տեսա, որ դա ոչ թե մի թանաքաձուկ էր, այլ երկուսը՝ ամուր իրար կպած: Կոկինոն արագ նրանց վեր քաշեց, հանեց ջրից ու դրեց նավակի հաստակին: Արուն, երևում է, շատ էր տարված իր սիրեցյալով, և նույնիսկ իր տարերքից հանկարծակի տեղափոխվելը ջրի երես՝ նրան բնավ չանհանգստացրեց: Նա այնքան ամուր էր կառչել էգին, որ Կոկինոն չկարողացավ միանգամից նրան պոկել և գցել ծովաջրով լի բանկան:

Ինձ շատ հրապուրեց որսի այսպիսի անսովոր ձևը, թեև սրտիս խորքում զգում էի, որ դա մի քիչ անազնիվ է: Մեկ ժամում մենք համեմատաբար ոչ մեծ տարածության վրա որսացինք հինգ արու թանաքաձուկ: Ես զարմացա, որ ծովախորշը այդքան խիտ է բնակեցված, ախր ցերեկն այնտեղ հազվադեպ կհանդիպես թանաքաձկների: Այդ ամբողջ ժամանակ էզը իր դերը կատարում էր ստոյիկի անտարբերությամբ, բայց ես, միևնույն է, գտնում էի, որ ձուկն արժանի է պարզևի, և Կոկինոնյին համոզեցի ազատ արձակել, թեև նա այդ արեց ակնհայտ ավստասանքով:

Ես հարցրի, թե որտեղից գիտե Կոկինոն, որ թանաքաձկնուհին կհրապուրի արուններին:

— Ժամանակներն են այդպիսին, — թոթվեց նա ուսերը:

— Ուրեմն հիմա, — հարցրի ես, — կարելի է նույն հաջողությամբ օգտվել ցանկացած էգից:

— Այո՛, — ասաց Կոկինոն: — Բայց իհարկե, որոշ թանաքաձկներ, ինչպես և կանայք, կարող են մյուսներից հրապուրիչ լինել, իսկ դա նշանակում է, որ նրանցից ավելի մեծ օգուտ կլինի:

Ափսոս որ որսի այս եղանակը չի կարելի կիրառել մյուս կենդանիների նկատմամբ: Որքա ն հրաշալի կլինեք, օրինակ, փորձի համար ջուրը նետել ծովաձիուկի էգին և հետո նրան դուրս քաշել՝ իրենից կախված կրքոտ երկրպագուներով:

Որքան ինձ հայտնի էր, որսի այս յուրատեսակ եղանակը կիրառում էր միայն Կոկիհնոն, ես երբեք չեմ տեսել, որ դրանից օգտվեին ուրիշ ձկնորսներ, իսկ նրանք, ու հետ ես խոսում էի, նույնիսկ չէին լսել այդ մասին և այնքան էլ չէին հավատում իմ պատմածին:

Մեր տան դիմացի կտրտված ափերի մոտ բնակվում էին հատկապես շատ կենդանիներ, և քանի որ այս տեղերը համեմատաբար ծանծաղ էին, կենդանիներ որսալը այնքան էլ դժվար բան չէր: Ես Լեսլիին համոզեցի ինձ համար նավակ կառուցել, որ բավական հեշտացրեց իմ հետազոտությունները: Այս հարթահատակ, գրեթե կլոր նավակը՝ խիստ թեքված աջ կողով, ստացավ «բուտլ Հաստապոչիկ» անունը և իշուկից հետո իմ ամենաթանկ սեփականությունն էր: Նավակի հատակին դնելով բանկաներ, տուփեր, ցանցորսիչներ և վերցնելով ուտելիք, ես ճանապարհ էի ընկնում երեք շներից բաղկացած ջոկատի՝ Արագավազի, Աղտոտիկի և Ռոջերի հետ, իսկ երբեմն էլ վերցնում էի նաև Ուլիս բվին, եթե դա նա ցանկանում էր: Շոգ, անհողմ եղանակին մենք օրերով հետազոտում էինք հեռավոր ծովախորշերն ու ջրիմուռներով պատված ժայռոտ արշիպելագները և շատ արկածներ էինք ունենում: Մի անգամ մենք հանդիպեցինք «ծովանապաստակների» (տետիս խիունջների) հսկայական վտառի: Այս խիունջները ունեն ծիրանագույն, ձվաձև մարմին, եզրերը բոլորածայրով, իսկ գլխին երկու տարօրինակ ելուստ, որոնք իսկապես շատ նման են նապաստակների երկար ականջներին: Խիունջները սողում էին ավազոտ հատակին ու քարերի վրայով, շարժվելով կղզուց դեպի հարավ, ինչ որ տեղ: Միմյանց նկատմամբ նրանք ոչ մի հետաքրքրություն չէին ցուցաբերում, և ես եզրակացրի, որ հավաքվել են նրանք միասին ոչ թե զուգավորվելու, այլ պարզապես գաղթում են կույտերով:

Մի ուրիշ անգամ, երբ մենք խարիսխ էինք գցել մի ոչ մեծ ծովախորշում, դեպի մեզ լողաց հաստլիկ, բարեհոգի դելֆինների վտառը: Ըստ երևույթին, նրանց գրավել էր «Բուտլի» նարնջասպիտակ վառ գույնը: Դելֆինները խայտում էին մեր շուրջը, թռչկոտում էին, պարում էին ու մոտենում էին ուղղակի նավակին, ջրից դուրս ցցելով ժպտուն մոռթոնները և իրենց շնչափողերից բաց էին թողնում խոր, կրքոտ հոգոցներ: Մի երիտասարդ դելֆին, որն ավելի վճռական էր մեծահասակներից, խրվեց նույնիսկ նավակի տակ, և մենք զգացինք, թե ինչպես նրա մեջքը անցավ «Բուտլի» հարթ տակով: Ես հիացմունքով էի նայում այս սքանչելի տեսարանին և միևնույն ժամանակ փորձում էի ճնշել իմ ջոկատի ընդվզումը, որը դելֆինների հայտնվելն ընկալում էր միանգամայն այլ կերպ: Արագավազը, որ երբեք աչքի չէր ընկնում խիզախությամբ, խցկվեց նավաքիթը և, դողալով վախից, կամաց վնգում էր: Աղտոտիկը որոշեց, որ իր կյանքը կարող է փրկել միայն մի ճանապարհով՝ թողնել նավը և լողալ դեպի ափ, ուստի ես ստիպված էի նրան ուժով պահել, ինչպես և Ռոջերին, որը համոզված էր, թե եթե իրեն թույլ տային թռչել ծով, նա կկարողանար մենամենակ մի քանի րոպեում հաշիվ մաքրել բոլոր դելֆինների հետ:

Մեկ անգամ ես այսպիսի արշավից բերեցի չափազանց արտառոց մի ավար: Այդ օրը բոլորը գտնվում էին քաղաքում, բացի Լեսլիից, որը դեռ նոր էր ապաքինվել դաժան դիզենտերիայից: Նա պառկած էր հյուրասենյակի բազմոցին, կատվիկի նման թույլ, ու սառույցով թեյ էր խմում և կարդում մի հսկայական աշխատություն ֆալիստիկայի (ձգաբանության) մասին: Լեսլին ինձ իսկույննեթ չափազանց պարզ լեզվով հայտնեց, որ իրեն չձանձրացնեն և չնետվեն աչքի առաջ, իսկ քանի որ ես քաղաք գնալ չէի ցանկանում, վերցրի շներին և գնացի դեպի «Բուտլը»:

Երբ մենք լողում էինք ծովախորշի երկայնքով, ես դեռ հեռվից ջրի խաղաղ մակերեսին նկատեցի, ինչպես ինձ թվաց, դեղին ջրիմուռների մի մեծ կծիկ: Ծովային ջրիմուռները միշտ էլ մեծ ուշադրության են արժանի. դրանց մեջ մշտապես գտնվում են բազմաթիվ ու զանազան մանր կենդանիներ, իսկ երբեմն էլ, եթե ձեր բախտը բերում է, ինչոր ավելի խոշոր բան: Ես, իհարկե, սլացա դեպի այդ տեղը, բայց երբ ավելի մոտեցա, տեսա, որ դա ամենևին էլ ջրիմուռ չէր, այլ դեղին գույնի ինչոր քար: Բայց թե ինչպե՞ս է քարը լողում ջրի մեջ, քսան ոտնաչափ խորությամբ ծովախորշում: Ես ուշադիր նայեցի և ուրախությունից ապշեցի, երբ տեսա, որ դա կրիա էր և բավականին մեծ: Բարձրացնելով թիերը, ես գոռացի շների վրա, անցա նավախելի կողմը և այնտեղ սպասեցի, անհամբերությունից այրվելով, մինչև որ «Բուտլը» ավելի կմոտենար կրիային: Կրիան գտնվում էր ջրի երեսին և, թվում էր, խոր քնած է: Հարկավոր էր նրան բռնել, նախքան կհասցներ արթնանալ: Ուռկաններն ու մյուս ցանցերը, որ գտնվում էին իմ նավակում, ամենևին էլ նախատեսված չէին մոտ երեք ոտնաչափ երկարություն ունեցող կրիայի որսի համար: Ինձ թվում էր, որ նրան կարելի է որսալ միայն ջրի մեջ սուզվելով, ինչոր ձևով բռնել նրան և նետել նավակը, քանի դեռ նա չի արթնացել: Ես չափազանց հուզված էի և նույնիսկ մտքովս չանցավ, որ այդքան մեծ կրիան կարող է բավական ուժեղ լինել, չհանձնվել առանց պայքարի:

Երբ նավակն արդեն գտնվում էր կրիայից մոտ վեց ոտնաչափ հեռավորության վրա, ես օդ հավաքեցի թոքերումս և սուզվեցի: Սկսեցի սուզվել ուղղակի կրիայի տակ, որ կտրեմ նրա նահանջի ճանապարհը: Սուզվելով տաք ջրի մեջ և արտասանելով կարճ աղոթք, որ իմ սուզվելուց առաջացած ցայտերը չարթնացնեն կրիային, իսկ եթե, այնուամենայնիվ, արթնանա, ապա քնաթաթախ չկարողանա ծլկել: Սուզվեցի բավականին խոր և անմիջապես շրջվեցի մեջքիս վրա: Իմ վերևում, ինչպես վիթխարի ոսկե դրամ, պառկել էր կրիան: Ես վեր նետվեցի ու ամուր բռնեցի նրա առջևի թաթերից, որ պատյանից կախվել էին մանգաղների նման:

Ի զարմանս իմ, կրիան չզարթնեց նույնիսկ իմ այդ գործողությունից: Երբ ես փնչացնելով ու դեռևս շարունակելով սեղմել նրա թաթերը՝ բարձրացա ջրի երես ու սկսեցի աչքերս թարթել, հասկացա բանն ինչու է: Կրիան սատկած էր: Սատկել էր նա արդեն շատ վաղուց, ինչի մասին վկայում էր իմ սեփական հոտառությունը և մանր ձկների բազմությունը, որոնք կտցում էին նրա թեփուկավոր վերջույթները:

Ափսոս էր, իհարկե, բայց դե այնուամենայնիվ ավելի լավ է մեռած կրիա, քան՝ ոչինչ: Ես նրան քաշեցի դեպի նավակն ու մի թաթը ամուր կապեցի նավակողին: Շները չափազանց շահագրգռված էին, նրանք կարծում էին, որ ես հատկապես իրենց համար բերել եմ չտեսնված համեղ պատառ: «Բուտլը» իր ձևի պատճառով երբեք էլ հեշտ դեկավարվող նավակ չէր, իսկ հիմա, երբ նրա կողից կապված էր սատկած կրիան, արդեն ամեն կերպ ջանում էր պտտվել միևնույն տեղում: Եվ այնուամենայնիվ մի ամբողջ ժամ լարված թիավարումից հետո մենք բարեհաջող հասանք նավամատույցին: Կապելով նավակը՝ ես կրիային քաշեցի ափ և, ինչպես հարկն է, գննեցի նրան: Դա բիսսա տեսակի կրիա էր: Այս տեսակի կրիաների պատյանից ակնոցի շրջանակ են պատրաստում, այնպես որ նրա խրտվիլակը երբեմն կարելի է տեսնել օպտիկայի խանութների ցուցափեղկերում: Բիսսայի գլուխը մեծ է, կնճռոտված դեղին մաշկով և կտուցի նման կեռ քթով, որը նրան շատ է նմանեցնում արագիլի: Իմ կրիայի պատյանը տեղտեղ ծեծված էր (դրանք ծովահողմերի, իսկ գուցե շնաձկների ատամների հետքեր էին) և զարդարված էր սպիտակաթույր մանր խեցգետիններով: Ստորին դեղնավուն վահանը ներս էր ընկած՝ ինչպես հաստ, թրջված ստվարաթուղթ:

Դեռ վերջերս ես ուսումնասիրել էի գետային սատկած կրիայի կազմաբանությունը, և հիմա ինձ առիթ ներկայացավ ծովային կրիայի ներքին կառուցվածքը համեմատել նրա քաղցրջրյա եղբայրակցի կառուցվածքի հետ: Ես արագ տուն վազեցի ու ձեռնասայլակը բերեցի, որով տուն տարա իմ ավարը և հանդիսավոր դրեցի պատշգամբում: Այնուհետև պատրաստեցի գրառումների տետրս . ինսամբով, ինչպես վիրահատական սրահում, դասավորեցի խարտոցներս, վիրադանակներս, ածելիներս և գործի անցա: